ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2018
02.2018
03.2018
04.2018
05.2018
06.2018
07.2018
08.2018
09.2018
10.2018
11.2018
Նոյեմբեր
12.2018

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 25-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2018

Նոյեմբեր

թիվ 11 (243)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

4 «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-401-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՍԻԹԻ» ՍՊԸ մասնաճյուղին արտարժույթի առուվաճառքի, «Դիվիսա էյ էմ» ՓԲԸ-ին լրացուցիչ ներդրումային ծառայություններ մատուցելու լիցենզիա տրամադրելու, «ԳԱՌԴԵ.Մ» ՍՊԸ գրավատնային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Տիգրան Մեծ մասնաճյուղը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Նուբարաշեն մասնաճյուղը գրանցելու, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորենացի 1 մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը 1 արտարժույթի փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 192Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 185-Ն որոշումը «Տասը հազար, քսան հազար և հիսուն հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 186-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

16 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 196-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 197-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

27 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 198-Ն որոշումը «Հազար, երկու հազար և հինգ հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին»

32 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 199-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

38 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 200-Ն որոշումը «Ֆինանսական համակարգի մասնակիցներին ուղղված բողոքների հաշվառման, պահպանման և գրանցման ներքին գործընթացին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ» կանոնակարգ 8/07-ը հաստատելու մասին»

58 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»[*] *Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին*[**]

Հոդված 1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-80-Ն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «(թղթային տարբերակը՝ նաև կնքված՝ կնիքի առկայության դեպքում)» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
3 նոյեմբերի 2018 թ., Երևան, ՀՕ-401-Ն

[*] *ՀՀՊՏ 2008 N 41 (631),02.07.08:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2018 թվականի հոկտեմբերի 24-ին (ՀՀՊՏ N 83 (1441), 7.11.18):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնաճյուղին (որոշում թիվ 187Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ԳԱՌԴԵ.Մ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 190Ա):
- «Դիվիսա էյ էմ» փակ բաժնետիրական ընկերությանը ***տրվել է*** լրացուցիչ ներդրումային ծառայություններ մատուցելու լիցենզիա (որոշում թիվ 202Ա):
- ***Գրանցվել է*** «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության Տիգրան Մեծ մասնաճյուղը (որոշում թիվ 1/785Ա):
- ***Թույլատրվել է*** ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության Խորենացի 1 մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/788Ա):
- ***Գրանցվել է*** ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության Նուբարաշեն մասնաճյուղը (որոշում թիվ 1/801Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/833Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2018 թ. նոյեմբերի 13-ի թիվ 192Ա որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 7.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.5%:***

*Տասը հազար, քսան հազար և հիսուն հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին**

Նպատակ ունենալով կազմակերպել Հայաստանի Հանրապետության դրամանիշերի շրջանառությունը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, 41-րդ և 42-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2018 թվականի նոյեմբերի 22-ից շրջանառության մեջ դնել տասը հազար, քսան հազար և հիսուն հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները:

2. Սահմանել, որ տասը հազար, քսան հազար և հիսուն հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքով՝ փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց, առանց ժամկետային սահմանափակումների: Տասը հազար դրամ անվանական արժեքով 2003, 2006, 2008 և 2012 թվականների թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության: Քսան հազար դրամ անվանական արժեքով 1999, 2007, 2009, 2012 թվականների թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության: Հիսուն հազար դրամ անվանական արժեքով 2001 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության:

3. Հաստատել տասը հազար, քսան հազար և հիսուն հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամների նմուշները՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

4. Հաստատել տասը հազար, քսան հազար և հիսուն հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամների նկարագրությունները՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
9 նոյեմբերի 2018 թ., N 185-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. նոյեմբերի 9-ին (ՀՀԳՏ N 28(631), 15.11.2018):

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 185-Ն որոշմամբ

Տասը հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նմուշը





Քսան հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նմուշը





Հիսուն հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նմուշը





Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 185-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Տասը հազար դրամ անվանական արժեքով 2018 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի

10000 դրամ անվանական արժեքով 2018 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի չափերն են՝ 145 x 72 մմ: Թղթադրամը տպագրված է Hybrid™ բարձրորակ կոմպոզիտային հումքի վրա, որը երկու կողմերից պոլիէսթերի բարակ շերտով պատված բամբակե թուղթ է: Թղթադրամը պարունակում է Կոմիտասի դիմանկարը պատկերող բազմերանգ ջրանիշ, ինչպես նաև անվանական արժեքն արտահայտող երկերանգ ջրանիշ: Թղթադրամի հիմնական գույներն են՝ մոխրագույնը և մանուշակագույնը:

Դիմերես

Թղթադրամի վերին մասում խորը տպագրության եղանակով տպագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 10000 ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի ձախ հատվածում Կոմիտասի դիմանկարն է և «ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ» գրառումը: Դիմանկարից ձախ ուղղահայաց տպագրված են թղթադրամի անվանական արժեքը թվերով՝ «10000» և սև գույնով թղթադրամի համարանիշը՝ բաղկացած «ԴԱ» տառերից (թղթադրամի սերիան) և ութ թվերից (թղթադրամի համարը): Դրանց ներքևում առկա է օպտիկապես փոփոխական ներկով տպագրված պաշտպանական հատկանիշ, որն ունի շրջանակի տեսք և պարունակում է քնարի պատկերն ու հորիզոնական «լողացող» 3D վառ էլեմենտ:

Կոմիտասի դիմանկարի ֆոնին իր ձեռագիր նոտագրությունների թերթերն են, դաշնամուր, քնար և բնապատկեր: Թղթադրամի անվանական արժեքը բառերով և թվերով՝ «ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 10000» տպագրված է ներքևի աջ մասում:

Թղթադրամի մեջտեղում առկա է պատուհանաձև պաշտպանական ներգիծ՝ կարմիրից կանաչի գունափոխման հատկանիշով. պարունակում է «լողացող» 3D վառ պատկերներ անկյունակների տեսքով, ՀՀ դրամի գրանշանի պատկերը, ինչպես նաև «10000» ապամետաղականացված գրառումը:

Թղթադրամի վերևի աջ հատվածում սև գույնով տպագրված է թղթադրամի համարանիշը, որից ներքև ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրություններն են: Դրանցից աջ գտնվում է թափանցիկ պատուհան՝ քնարի հստակ պատկերով:

Թղթադրամի աջ եզրին հորիզոնական տպագրված է թողարկման տարեթիվը՝ «2018», և ուղղահայաց՝ «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»:

Տկարատեսների համար թղթադրամի ձախ և աջ եզրերին առկա են շոշափելի ուղղահայաց գծեր:

Դարձերես

Թղթադրամի վերին մասում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումն է, իսկ դրանից ներքև՝ մանրատառաշարով կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 10000 ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի վերևի ձախ անկյունում գտնվում է թափանցիկ պատուհան՝ քնարի հստակ պատկերով:

Թղթադրամի մեջտեղի հատվածում Գևորգյան ճեմարանի պատկերն է, ճեմարանի դահլիճի որմնանկարներից հատվածներ և երկգույն մարգարտափայլ ժապավեն:

Թղթադրամի աջ մասում Կոմիտասի արձանի պատկերն է, որից աջ առկա են ուղղահայաց «10000» թիվը և «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը:

Թղթադրամի անվանական արժեքը թվերով և բառերով՝ «10000 ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» տպագրված է ներքևի հատվածում:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Քսան հազար դրամ անվանական արժեքով 2018 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի

20000 դրամ անվանական արժեքով 2018 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի չափերն են՝ 150 x 72 մմ: Թղթադրամը տպագրված է Hybrid™ բարձրորակ կոմպոզիտային հումքի վրա, որը երկու կողմերից պոլիէսթերի բարակ շերտով պատված բամբակե թուղթ է: Թղթադրամը պարունակում է Հովհաննես Այվազովսկու դիմանկարը պատկերող բազմերանգ ջրանիշ, ինչպես նաև անվանական արժեքն արտահայտող երկերանգ ջրանիշ: Թղթադրամի հիմնական գույնն է կանաչը:

Դիմերես

Թղթադրամի վերին մասում խորը տպագրության եղանակով տպագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 20000 ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի ձախ հատվածում Հովհաննես Այվազովսկու դիմանկարն է և «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ» գրառումը: Դիմանկարից ձախ ուղղահայաց տպագրված են թղթադրամի անվանական արժեքը թվերով՝ «20000» և սև գույնով թղթադրամի համարանիշը՝ բաղկացած «ԵԱ» տառերից (թղթադրամի սերիան) և ութ թվերից (թղթադրամի համարը): Դրանց ներքևում առկա է օպտիկապես փոփոխական ներկով տպագրված պաշտպանական հատկանիշ, որն ունի շրջանակի տեսք և պարունակում է նավի պատկերն ու հորիզոնական «լողացող» 3D վառ էլեմենտ:

Հովհաննես Այվազովսկու դիմանկարի ֆոնին իր կտավներից հատվածներ են և նավի պատկեր□ Թղթադրամի անվանական արժեքը բառերով և թվերով՝ «ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 20000» տպագրված է ներքևի աջ մասում:

Թղթադրամի մեջտեղում առկա է պատուհանաձև պաշտպանական ներգիծ՝ կանաչից կապույտի գունափոխման հատկանիշով. պարունակում է «լողացող» 3D վառ պատկերներ անկյունակների տեսքով, ՀՀ դրամի գրանշանի պատկերը, ինչպես նաև «20000» ապամետաղականացված գրառումը:

Թղթադրամի վերևի աջ հատվածում սև գույնով տպագրված է թղթադրամի համարանիշը, որից ներքև ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրություններն են: Դրանցից աջ գտնվում է թափանցիկ պատուհան՝ նավի հստակ պատկերով:

Թղթադրամի աջ եզրին հորիզոնական տպագրված է թողարկման տարեթիվը՝ «2018», և ուղղահայաց՝ «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»:

Տկարատեսների համար թղթադրամի ձախ և աջ եզրերին առկա են շոշափելի ուղղահայաց գծեր:

Դարձերես

Թղթադրամի վերին մասում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումն է, իսկ դրանից ներքև՝ մանրատառաշարով կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 20000 ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի վերևի ձախ անկյունում գտնվում է թափանցիկ պատուհան՝ նավի հստակ պատկերով:

Թղթադրամի մեջտեղի հատվածում Հովհաննես Այվազովսկու պատկերասրահի շենքն է, նրա ծննդավայր Թեոդոսիայի համապատկերը և երկգույն մարգարտափայլ ժապավեն:

Թղթադրամի աջ մասում Հովհաննես Այվազովսկու արծանի պատկերն է, որից աջ առկա են ուղղահայաց «20000» թիվը և «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը:

Թղթադրամի անվանական արժեքը թվերով և բառերով՝ «20000 ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» տպագրված է ներքևի հատվածում:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Հիսուն հազար դրամ անվանական արժեքով 2018 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի

50000 դրամ անվանական արժեքով 2018 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի չափերն են՝ 155 x 72 մմ: Թղթադրամը տպագրված է Hybrid™ բարձրորակ կոմպոզիտային հումքի վրա, որը երկու կողմերից պոլիէսթերի բարակ շերտով պատված բամբակե թուղթ է: Թղթադրամը պարունակում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի դիմանկարը պատկերող բազմերանգ ջրանիշ, ինչպես նաև անվանական արժեքն արտահայտող երկերանգ ջրանիշ: Թղթադրամի հիմնական գույնն է ոսկեգույնը:

Դիմերես

Թղթադրամի վերին մասում խորը տպագրության եղանակով տպագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 50000 ՀԻՍՈՒՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի ձախ հատվածում Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերն է և «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» գրառումը: Պատկերից ձախ ուղղահայաց տպագրված են թղթադրամի անվանական արժեքը թվերով՝ «50000» և սև գույնով թղթադրամի համարանիշը՝ բաղկացած «ԷԱ» տառերից (թղթադրամի սերիան) և ութ թվերից (թղթադրամի համարը): Դրանց ներքևում առկա է օպտիկապես փոփոխական ներկով տպագրված պաշտպանական հատկանիշ, որն ունի շրջանակի տեսք և պարունակում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջի պատկերն ու հորիզոնական «լողացող» 3D վառ էլեմենտ:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերի ֆոնին նրա կյանքն ու գործունեությունը պատմող ձեռագրերից հատվածներն են, խաչքար և Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը: Թղթադրամի անվանական արժեքը բառերով և թվերով՝ «ՀԻՍՈՒՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 50000» տպագրված է ներքևի աջ մասում:

Թղթադրամի մեջտեղում առկա է պատուհանաձև պաշտպանական ներգիծ՝ ոսկեգույնից կանաչի գունափոխման հատկանիշով. պարունակում է «լողացող» 3D վառ պատկերներ անկյունակների տեսքով, ՀՀ դրամի գրանշանի պատկերը, ինչպես նաև «50000» ապամետաղականացված գրառումը:

Թղթադրամի վերևի աջ հատվածում սև գույնով տպագրված է թղթադրամի համարանիշը, որից ներքև ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրություններն են: Դրանցից աջ գտնվում է թափանցիկ պատուհան՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջի հստակ պատկերով:

Թղթադրամի աջ եզրին հորիզոնական տպագրված է թողարկման տարեթիվը՝ «2018», և ուղղահայաց՝ «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»:

Տկարատեսների համար թղթադրամի ձախ և աջ եզրերին առկա են շոշափելի ուղղահայաց գծեր:

Դարձերես

Թղթադրամի վերին մասում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումն է, իսկ դրանից ներքև՝ մանրատառաշարով կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 50000 ՀԻՍՈՒՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի վերևի ձախ անկյունում գտնվում է թափանցիկ պատուհան՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջի հստակ պատկերով:

Թղթադրամի մեջտեղի հատվածում Արարատ լեռն է, Խոր Վիրապի վանքը, վանքային համալիրի Սբ Աստվածածին եկեղեցու պատին դրոշմված քրիստոնեության ընդունման տեսարանը և երկգույն մարգարտափայլ ժապավեն:

Թղթադրամի աջ մասում Սուրբ Գրիգոր Լուսավորչի որմնաքանդակն է, որից աջ առկա են ուղղահայաց «50000» թիվը և «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը:

Թղթադրամի անվանական արժեքը թվերով և բառերով՝ «50000 ՀԻՍՈՒՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» տպագրված է ներքևի հատվածում:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի15-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով կազմակերպել Հայաստանի Հանրապետության դրամանիշերի շրջանառությունը, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում կանխիկ դրամով իրականացվող գործառնությունները,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը հաստատելու մասին թիվ 40-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնակարգի Հավելված 1-ը և Հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
9 նոյեմբերի 2018 թ., N 186-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. նոյեմբերի 9-ին (ՀՀԳՏ N 28(631), 15.11.2018):

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 186-Ն որոշմամբ

«Հավելված 1
«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի

Թղթադրամների վճարունակությունը որոշելու ցանցի տիպօրինակ

Թղթադրամի վճարունակությունը որոշող վանդակապատ ցանցը տպագրվում է թղթի կամ թափանցիկ ժապավենի վրա՝ տվյալ անվանական արժեքի, տվյալ տարեթվի նմուշի թղթադրամի չափերով: Այն բաղկացած է 200 հավասարաչափ վանդակներից: Վնասված դրամանիշը տեղադրվում է ցանցի վրա և թղթի վրա տպագրված ցանցի դեպքում շուրջը գծվում է՝ կրկնելով թղթադրամի վնասված եզրագիծը, իսկ թափանցիկ ժապավենի վրա տպագրված ցանցի դեպքում ընդհանուր պատկերը լուսածորվում կամ լուսանկարվում է: Շրջագծի երկարությամբ դասավորված վանդակների թվի կեսին ավելացվում է այդ շրջագծի ներսում ընկած վանդակների ընդհանուր քանակը, որից հետո ստացված արդյունքից հանվում է տասնորդական մասը: Դրամանիշը պետք է վճարունակ համարել այն դեպքում, երբ ստացված արդյունքը հավասար կամ մեծ է 120-ից:

Թղթադրամների վճարունակությունը որոշող վանդակապատ ցանցերի չափերը

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ		Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներ	
Անվանական արժեքը	Չափերը (մմ)	Անվանական արժեքը	Չափերը (մմ)
500 դրամ (1999 թ.)	129 x 72	10 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (1999 թ.)	136 x 72	25 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2001 թ.)	136 x 72	50 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2011 թ.)	136 x 72	50 դրամ (1998 թ.)	122 x 65
1000 դրամ (2015 թ.)	136 x 72	100 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (1999 թ.)	143 x 72	100 դրամ (1998 թ.)	122 x 65
5000 դրամ (2003 թ.)	143 x 72	200 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (2009 թ.)	143 x 72	500 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (2012 թ.)	143 x 72	1000 դրամ (1994 թ.)	145 x 68
10000 դրամ (2003 թ.)	150 x 72	5000 դրամ (1995 թ.)	145 x 71
10000 դրամ (2006 թ.)	150 x 72	5000 դրամ (1995 թ.)	145 x 71
10000 դրամ (2008 թ.)	150 x 72		
10000 դրամ (2012 թ.)	150 x 72		
10000 դրամ (2018 թ.)	145 x72		
20000 դրամ (1999 թ.)	150 x 72		
20000 դրամ (2007 թ.)	155 x 72		
20000 դրամ (2009 թ.)	155 x 72		
20000 դրամ (2012 թ.)	155 x 72		
20000 դրամ (2018 թ.)	150 x 72		
50000 դրամ (2001 թ.)	160 x 79		
50000 դրամ (2018 թ.)	155 x 72		
100000 դրամ (2009 թ.)	160 x 72		

Հավելված 6

«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի

Թղթադրամների արմատների փաթեթաթղթերի, կապոցների վրադիրների գույները և արմատների փաթեթաթղթերի չափերը

Դրամանիշերը ըստ անվանական արժեքների	Վրադիրի և փաթեթաթղթի գույները	Լայնությունը (մմ)	Երկարությունը (մմ)	Մեկ գծի լայնությունը (մմ)	Գծերի քանակը (հատ)
10 դ	դարչնագույն	45	220	4	1
25 դ	կարմիր	45	220	4	1
50 դ	կապույտ	45	230	4	1
100 դ	դարչնագույն	45	230	4	2
200 դ	կարմիր	45	240	4	2
500 դ	կանաչ	45	240	4	2
1000 դ	դարչնագույն	50	260	4	3
5000 դ	սև	50	260	4	1
10000 դ	կապույտ	57	290	10	2
20000 դ	նարնջագույն	55	260	10	1
50000 դ	մանուշակագույն	57	290	10	1
100000 դ	կանաչ	57	260	10	1

Թղթադրամների կապոցների վրադիրների չափերը

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ		Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներ	
Անվանական արժեքը	Չափերը (մմ)	Անվանական արժեքը	Չափերը (մմ)
500 դրամ (1999 թ.)	129 x 72	10 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (1999 թ.)	136 x 72	25 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2001թ.)	136 x 72	50 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2011 թ.)	136 x 72	50 դրամ (1998 թ.)	122 x 65
1000 դրամ (2015 թ.)	136 x 72	100 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (1999 թ.)	143 x 72	100 դրամ (1998 թ.)	122 x 65
5000 դրամ (2003 թ.)	143 x 72	200 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (2009 թ.)	143 x 72	500 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (2012 թ.)	143 x 72	1000 դրամ (1994 թ.)	145 x 68
10000 դրամ (2003 թ.)	150 x 72	5000 դրամ (1995 թ.)	145 x 71
10000 դրամ (2006 թ.)	150 x 72	5000 դրամ (1995 թ.)	145 x 71
10000 դրամ (2008 թ.)	150 x 72		
10000 դրամ (2012 թ.)	150 x 72		
10000 դրամ (2018 թ.)	145 x72		
20000 դրամ (1999 թ.)	150 x 72		
20000 դրամ (2007 թ.)	155 x 72		
20000 դրամ (2009 թ.)	155 x 72		
20000 դրամ (2012 թ.)	155 x 72		
20000 դրամ (2018 թ.)	150 x 72		
50000 դրամ (2001 թ.)	160 x 79		
50000 դրամ (2018 թ.)	155 x 72		
100000 դրամ (2009 թ.)	160 x 72		

»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարելավել բանկերի կողմից նորմատիվների հաշվարկման կարգը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 37-րդ կետը «6-րդ կետով սահմանված ակտիվների համապատասխան ռիսկի կշիռներով» բառերից հետո լրացնել «(, բայց ոչ ավելի, քան 100 տոկոսով)» բառերով,
2) Կանոնակարգի 37-րդ, 38-րդ, 42-րդ և 43-րդ կետերը «միջբանկային վարկերի,» բառերից հետո լրացնել «բանկերի նկատմամբ այլ պահանջների,» բառերով,
3) Կանոնակարգի 38-րդ կետում «հավելված 3-ով սահմանված ակտիվների համապատասխան կշիռներով» բառերը փոխարինել «3-րդ հավելվածի 6-րդ կետով սահմանված ակտիվների համապատասխան ռիսկի կշիռներով (բայց ոչ ավելի, քան 100 տոկոսով)» բառերով,
4) Կանոնակարգի 42-րդ և 43-րդ կետերում «3-րդ հավելվածի 6-րդ կետով սահմանված ակտիվների համապատասխան կշիռներով» բառերը փոխարինել «3-րդ հավելվածի 6-րդ կետով սահմանված ակտիվների համապատասխան ռիսկի կշիռներով (բայց ոչ ավելի, քան 100 տոկոսով)» բառերով,
5) Կանոնակարգի 49-րդ կետի վերջին պարբերությունում «3-րդ հավելվածի 6-րդ կետով սահմանված ակտիվների համապատասխան կշիռներով» բառերը փոխարինել «3-րդ հավելվածի 6-րդ կետով սահմանված ակտիվների համապատասխան ռիսկի կշիռներով (բայց ոչ ավելի, քան 100 տոկոսով)» բառերով,
6) Կանոնակարգի 53.1-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «1) Պահուստավորումն իրականացվում է այն ժամկետով, որի չափով ներգրավված միջոցը պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում ընդգրկվել էր նվազեցված դրույքաչափով,»,
7) Կանոնակարգի 53.1 կետի 2-րդ ենթակետում «1.5-ապատիկը» բառը փոխարինել «1.25-ապատիկ» բառով,
8) Կանոնակարգի 53.1 կետը լրացնել հետևյալ նախադասությամբ.

   «Սույն կետով սահմանված պահուստավորումն իրականացվում է այն դեպքում, եթե վաղաժամկետ մարումն իրականացվել է մինչև այն ժամկետի ավարտը, որին համապատասխանող նվազեցված դրույքաչափով ներգրավված միջոցն ընդգրկվել էր պահուստավորման հաշվարկում:»,
9) Կանոնակարգի հավելված 3-ի 6-րդ կետի աղյուսակի 6.15-6.18-րդ տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. նոյեմբերի 23-ին (ՀՀՊՏ N31 (634), 17.12.2018):

«

6.15. Պահանջներ օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի նկատմամբ	/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/	0	/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/	0
	/Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3/	20	/Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3/	20
	/ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/	50	/ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/	50
	/ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/	100	/ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/	100
	/Բ-/-ից ցածր/Բ3-ից ցածր	150	/Բ-/-ից ցածր/Բ3-ից ցածր	150
	Վարկանիշ չունեցող	100	Վարկանիշ չունեցող	150
6.16. Պահանջներ օտարերկրյա տեղական կառավարման մարմինների նկատմամբ	/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/	20	/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/	20
	/Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/	50	/Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/	50
	/ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/	100	/ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/	100
	/Բ-/-ից ցածր/Բ3-ից ցածր	150	/Բ-/-ից ցածր/Բ3-ից ցածր	150
	Վարկանիշ չունեցող	100	Վարկանիշ չունեցող	150
6.17. Կարճաժամկետ պահանջներ օտարերկրյա բանկերի նկատմամբ	/Ա-1+,Ա-1/Ֆ1+,Ֆ1/Պ-1/	20	/Ա-1+,Ա-1/Ֆ1+,Ֆ1/Պ-1/	20
	/Ա-2/Ֆ2/Պ-2/	50	/Ա-2/Ֆ2/Պ-2/	50
	/Ա-3/Ֆ3/Պ-3/	100	/Ա-3/Ֆ3/Պ-3/	100
	/Ա-3-ից ցածր/Ֆ3-ից ցածր/ՆՊ/	150	/Ա-3-ից ցածր/Ֆ3-ից ցածր/ՆՊ/	150
	Վարկանիշ չունեցող	100	Վարկանիշ չունեցող	150
6.18. Երկարաժամկետ պահանջներ օտարերկրյա բանկերի նկատմամբ	/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/	20	/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/	20
	/Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/	50	/Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/	50
	/ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/	100	/ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/	100
	/Բ-/-ից ցածր/Բ3-ից ցածր	150	/Բ-/-ից ցածր/Բ3-ից ցածր	150
	Վարկանիշ չունեցող	100	Վարկանիշ չունեցող	150

»,

10) Կանոնակարգի հավելված 3-ի 7.1-րդ կետի 3-րդ ենթակետը «մարումները:» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ընդ որում, եթե արտահանողն իր կողմից արտահանվող ապրանքների և (կամ) ծառայությունների դիմաց գնանշումն իրականացնում է արտարժույթով, սակայն դրա դիմաց փաստացի վճարումը ստանում է Հայաստանի Հանրապետության դրամով՝ արտահայտված վճարման օրվա փոխարժեքով, ապա նման միջոցները նույնպես կարող են ներառվել սույն ենթակետով նախատեսված ներհոսքերի հաշվարկի մեջ:»,

11) Կանոնակարգի հավելված 3-ի 7.1.2-րդ կետում «ստացել է» բառը փոխարինել «ունի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման առաջին կետի 9-րդ ենթակետի, որն ուժի մեջ է մտնում սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո, և սույն որոշման առաջին կետի 6-8-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
29 նոյեմբերի 2018 թ., N 196-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարձրացնել ապահովագրական ընկերությունների գործունեության նկատմամբ վերլուծական և վիճակագրության հավաքագրման գործընթացների արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը հաստատելու մասին» թիվ 366-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» Կանոնակարգ 3/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/04) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3/04-ի 21-րդ կետում «2-րդ և 4-րդ մասերի» բառերից հետո լրացնել «, ընդ որում, տարանջատվում է նաև երկրաշարժի ռիսկի ապահովագրությունը և համապատասխան տողում լրացվում է տեղեկատվություն բոլոր այն ապահովագրության պայմանագրերի գծով, որոնք նախատեսում են երկրաշարժի ռիսկը:»,

2) Կանոնակարգ 3/04-ի 219-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«219. Թիվ 15 հաշվետվության 2-րդ աղյուսակում արտացոլվում է Կանոնակարգ 3/03-ի 6-րդ գլխի համաձայն հաշվարկած ապահովագրողին ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստի, ինչպես նաև կանոնակարգ 3/03-ի 11-րդ գլխի համաձայն հաշվարկած՝ պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի վերաբերյալ տեղեկատվությունը: Հաշվետվության 2.1 աղյուսակում արտացոլվում է տեղեկատվություն հաշվետու ամսաթվին նախորդող տասներկու ամիսների ընթացքում կարգավորված պահանջների և պահանջների կարգավորման ծախսերի մեծության և կարգավորված պահանջների քանակի վերաբերյալ՝ ըստ ապահովագրության դասերի, ըստ պահանջի ներկայացման ամիսների և ըստ ներկայացված պահանջի կարգավորման ժամանակահատվածի, ընդ որում՝ ըստ այն ապահովագրության դասերի, որոնց գծով հնարավոր է օգտագործել «միավոր պահանջի հատուցման միջին չափի» մեթոդը: Որպես պահանջի ներկայացման ամիս լրացվում են հաշվետու ամսվան նախորդող 12 ամիսները՝ ամսաթվային ձևաչափով (տվյալ ամսվա վերջին օրը), իսկ այն պահանջների գծով, որոնք ներկայացվել են մինչ հաշվետու ամսվան նախորդող 12-րդ ամիսը, համապատասխան բջջում լրացվում է «Մինչ հաշվետու ամսվան նախորդող 12-րդ ամիս»: Աղյուսակ 2.1-ի 3-րդ սյունակը ցույց է տալիս, թե քանի ամիսների ընթացքում են կարգավորվել յուրաքանչյուր դիտարկվող ժամանակահատվածում ներկայացված պահանջները: Այն դեպքում, երբ պահանջը կարգավորվել է պահանջի ներկայացման ամսվա ընթացքում, սյունակի համապատասխան բջջում լրացվում է «0», եթե ներկայացված պահանջը կարգավորվել է պահանջի ներկայացմանը հաջորդող ամսվա ընթացքում, ապա սյունակում լրացվում է «1» և այդպես շարունակ: Տվյալ սյունակում արտացոլվում են բոլոր այն պահանջները, որոնք կարգավորվել են մինչև հաշվետու ամսվա նախորդ ամիսը ներառող ժամանակահատվածում: Այն պահանջների գծով, որոնք ներկայացվել են մինչև հաշվետու ամսվան նախորդող 12-րդ ամիսը, 3-րդ սյունակում լրացվում է «0», եթե ներկայացված պահանջը կարգավորվել է հաշվետու ամսվան նախորդող 12-րդ ամսվա ընթացքում, «1»՝ եթե պահանջը կարգավորվել է հաշվետու ամսվան նախորդող 11-րդ ամսվա ընթացքում և այդպես շարունակ և լրացվում է «11», եթե պահանջը կարգավորվել է հաշվետու ամսվան նախորդող ամսվա ընթացքում: Աղյուսակ 2.1-ի 4-րդ և 5-րդ սյունակներում ըստ ապահովագրության դասի, ըստ պահանջի ներկայացման

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. նոյեմբերի 23-ին (ՀՀՊՏ N31 (634), 17.12.2018):

ամսվա և կարգավորման ժամանակահատվածի լրացվում են համապատասխանաբար կարգավորված պահանջների և պահանջների կարգավորման ծախսերի մեծությունը, բացառությամբ ծայրահեղ մեծ պահանջների, և դրանց կարգավորման ծախսերի և կարգավորված պահանջների քանակը, բացառությամբ ծայրահեղ մեծ պահանջների և ապահովագրողի կողմից մերժված պահանջների: Հաշվետվության 3-րդ աղյուսակում արտացոլվում է բոնուսների և զեղչերի պահուստի վերաբերյալ տեղեկատվությունը:»,

3) Կանոնակարգ 3/04-ի 222-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«222. Թիվ 15 հաշվետվության 4-րդ աղյուսակի 2-4-րդ սյուներում արտացոլվում են, համապատասխանաբար, կանոնակարգ 3/03-ի 32-րդ կետով սահմանված «Հ», «Պ», «Գ» և «ՏՉՊՊ» մեծությունների արժեքները: Հաշվետվության 4.1 աղյուսակում արտացոլվում է կանոնակարգ 3/03-ի 32-րդ կետով սահմանված «Հ» մեծության հաշվարկի համար անհրաժեշտ տեղեկատվությունը ըստ ապահովագրության դասերի, ըստ պատահարը տեղի ունենալու ամիսների և ըստ պատահարի գծով հատուցման հաշվեգրման ժամանակահատվածի, ընդ որում՝ ըստ այն ապահովագրության դասերի, որտեղ պահանջների՝ հաշվետու ամսաթվին և դրան նախորդող 11 ամիսների միջին ամսական քանակը հիսուն և ավելի է, և պահանջների հատուցումների չափերն այդ ամիսների ընթացքում էականորեն չեն տատանվել: Որպես պատահարի տեղի ունենալու ամիս լրացվում է հաշվետու ամիսը, հաշվետու ամսվան նախորդող 11 ամիսները՝ ամսաթվային ձևաչափով (տվյալ ամսվա վերջին օրը), իսկ այն պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել մինչև հաշվետու ամսվան նախորդող 11-րդ ամիսը, համապատասխան բջջում լրացվում է «Մինչ հաշվետու ամսվան նախորդող 11-րդ ամիս»: Աղյուսակ 4.1-ի 3-րդ սյունակը ցույց է տալիս, թե քանի ամիս հետո է յուրաքանչյուր դիտարկվող ժամանակահատվածում տեղի ունեցած պատահարների գծով հաշվեգրվել հատուցում: Այն դեպքում, երբ պատահարի գծով հատուցումը հաշվեգրվել է պատահարի տեղի ունենալու ամսվա ընթացքում, սյունակի համապատասխան բջջում լրացվում է «0», եթե պատահարի գծով հատուցումը հաշվեգրվել է պատահարի տեղի ունենալու ամսվան հաջորդող ամսվա ընթացքում, ապա սյունակի համապատասխան բջջում լրացվում է «1» և այդպես շարունակ մինչև այն պատահարները, որոնց գծով հատուցումները հաշվեգրվել են հաշվետու ամսվա ընթացքում: Այն պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել մինչև հաշվետու ամսվան նախորդող 11-րդ ամիսը, 3-րդ սյունակում լրացվում է «0», եթե պատահարի գծով հատուցումը հաշվեգրվել է հաշվետու ամսվան նախորդող 11-րդ ամսվա ընթացքում, «1»՝ եթե պատահարի գծով հատուցումը հաշվեգրվել է հաշվետու ամսվան նախորդող 10-րդ ամսվա ընթացքում և այդպես շարունակ և լրացվում է «11», եթե պահանջը կարգավորվել է հաշվետու ամսվա ընթացքում: Աղյուսակ 4.1-ի 4-րդ սյունակում լրացվում է հաշվեգրված ապահովագրական հատուցումների և պահանջների կարգավորման ծախսերի մեծությունն ըստ ապահովագրության դասի, ըստ պատահարի տեղի ունենալու ամսվա և հատուցման հաշվեգրման ժամանակահատվածի:»,

4) Կանոնակարգ 3/04-ի 224-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«224. Թիվ 16 հաշվետվության 1-ին աղյուսակում արտացոլվում է տեղի ունեցած, սակայն ապահովագրողին դեռևս չներկայացված պահանջների պահուստի գործակցի հաշվարկման մեջ ներառվող բտ-1, բտ-2, բտ-3 տարրերի հաշվարկի համար անհրաժեշտ տեղեկատվությունը: Աղյուսակի՝ որպես 2-րդ և 5-րդ սյան անվանումներ լրացվում է հաշվետու տարվան նախորդող տարին, որպես 3-րդ և 6-րդ անվանումներ՝ հաշվետու տարվան նախորդող 2-րդ հաշվետու տարին, իսկ որպես 4-րդ և 7-րդ սյան անվանումներ լրացվում է հաշվետու տարվան նախորդող 3-րդ հաշվետու տարին (օրինակ՝ եթե հաշվետու տարվան նախորդող 2-րդ հաշվետու տարին 2015 թվականն է, ապա որպես ենթասյան անվանում լրացվում է «2015»): Այնուհետև սյուները լրացվում են կանոնակարգ 3/03-ի 33-րդ կետով սահմանված կարգով: Աղյուսակը չի լրացվում այն ապահովագրության դասերի գծով, որոնցով ապահովագրողը գործունեություն ծավալել է մինչև երկու տարի տևողությամբ:»,

5) Կանոնակարգ 3/04-ի 235-րդ կետի 4-րդ ենթակետում ««Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն»,» բառերից հետո լրացնել ««Երկրաշարժի ռիսկի ապահովագրություն»,» բառերը,

6) Կանոնակարգ 3/04-ի 290-րդ կետից հետո լրացնել նոր՝ 290.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«290.1. Թիվ 22 հաշվետվության «Ագենտնամբր» (AGENT_NUMBER)» տարրում լրացվում է ապահովագրական գործակալի՝ Կենտրոնական բանկի ապահովագրական միջնորդների ռեգիստրում հաշվառման համարը:»,

7) Կանոնակարգ 3/04-ի Հավելված 1-ում «Սահմանված հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտներ և վնասներ» հաշվին համապատասխան տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ.

«

Այլ համապարփակ եկամուտ	5	54	540	5406

»,

8) Կանոնակարգ 3/04-ի հավելվածներ 2, 4, 6, 11, 12, 13, 14, 15, 16, 17-ում բոլոր աղյուսակները, բացառությամբ հավելված 14-ի աղյուսակ 2-ի և հավելված 16-ի 5-րդ աղյուսակի, լրացնել նոր՝ 1.20 տողով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

1.20	Ընդ որում՝ երկրաշարժի ռիսկի ապահովագրություն

»,

9) Կանոնակարգ 3/04-ի Հավելված 10-ում.
ա. Աղյուսակ 1-ի 10-րդ տողում «պատասխանատվության» բառից հետո լրացնել «կամավոր» բառը,
բ. Աղյուսակ 1-ը լրացնել նոր՝ 18.1 և 18.2 տողերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

18.1	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	1.19
18.2	Ընդ որում՝ երկրաշարժի ռիսկի ապահովագրություն	1.20

»,

10) Կանոնակարգ 3/04-ի Հավելված 15-ի աղյուսակ 2-ը շարադրել նոր խմբագրությամբ, աղյուսակ 2-ից հետո լրացնել աղյուսակ 2.1-ը և աղյուսակ 4-ից հետո լրացնել աղյուսակ 4.1-ը՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):
11) Կանոնակարգ 3/04-ի Հավելված 16-ի թիվ 16 հաշվետվության աղյուսակ 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
29 նոյեմբերի 2018 թ., N 197-Ն

Հավելված 1
Հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 197-Ն որոշմամբ

«ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ, ՍԱԿԱՅՆ ԴԵՌԵՎ ՉԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ապահովագրական ընկերության անվանում _____

Ամսաթիվ _____

Ապահովագրության ռիսկի տեսակը	Խմբային կենսաթոշակային պայմանագրերով պահպանվող պահանջների քանակը (Քեպ), այդ թվում՝	«Դեպք առ դեպք» մեթոդով գնահատված պահանջների քանակ (Քեպ), այդ թվում՝				«Դեպք առ դեպք» մեթոդով գնահատված պահանջների ծավալ				Խմբային կենսաթոշակային պայմանագրերով պահպանվող պահանջների ծավալը (Քրդ)	Խմբային կենսաթոշակային պայմանագրերով պահպանվող պահանջների միջին ծավալը (Քրդ)	Խմբային կենսաթոշակային պայմանագրերով պահպանվող պահանջների ծավալի ստանդարտ շեղումը	Խմբային կենսաթոշակային պայմանագրերով պահպանվող պահանջների ծավալի վարիացիայի գործակիցը (%)	Խմբային կենսաթոշակային պայմանագրերով պահպանվող պահանջների ծավալի ստանդարտ սխալը	Ստորին վերջնական սահմանը (Քրդ)	Վերին վերջնական սահմանը (Քրդ)
		ընդհանուր-ձևով	ըստ կենսաթոշակային պայմանագրերի, որոնց համար կենսաթոշակային գործարքներ չեն կատարվել	ըստ կենսաթոշակային պայմանագրերի, որոնց համար կենսաթոշակային գործարքներ են կատարվել	այլ	ընդհանուր-ձևով	ըստ կենսաթոշակային պայմանագրերի, որոնց համար կենսաթոշակային գործարքներ չեն կատարվել	ըստ կենսաթոշակային պայմանագրերի, որոնց համար կենսաթոշակային գործարքներ են կատարվել	այլ							
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*	*17*
1	***Ոչ կյանքի ապահովագրություն, այդ թվում՝***															
1.1	Դժբախտ պատահարներից ապահովագրություն															
1.2	Առողջության ապահովագրություն															
1.3	Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն															
1.4	Երկաթուղային տրանսպորտի ապահովագրություն															
1.5	Օդանավերի ապահովագրություն															
1.6	Ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն															
1.7	Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն															
1.8	Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն															
1.9	Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն															
1.10	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն															
1.11	Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն															
1.12	Ջրային փոխադրամիջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն															

1.13	Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն																
1.14	Վարկի ապահովագրություն																
1.15	Երաշխիքի տրամադրում																
1.16	Ֆինանսական վնասների ապահովագրություն																
1.17	Դատական և արտադատական ծախսերի ապահովագրություն																
1.18	Աջակցության ապահովագրություն																
1.19	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն																
1.20	Ընդ որում՝ երկրաշարժի ռիսկի ապահովագրություն																
2	***Կյանքի ապահովագրություն, այդ թվում***																
2.1	Կյանքի ապահովագրություն																
2.2	Ամուսնության, ծնունդի ապահովագրություն																
2.3	Ներդրումային ակտիվներին կապվող ապահովագրություն																
2.4	Տոնտին ապահովագրություն																
2.5	Կապիտալի հատուցման ապահովագրություն																
2.6	Կուտակային կենսաթոշակային միջոցների կառավարում																
3	***ԸՆԴԱՄԵՆԸ***																

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ՝ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ՝ _____

Պատասխանատու ակտուար՝ _____

ԱՂՅՈՒՍԱԿ 2.1. ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ, ՍԱԿԱՅՆ ԴԵՌԵՎՍ ՉԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ապահովագրության դաս		Պահանջի ներկայացման ամիս	Պահանջի կարգավորման ժամանակահատված (ամիս)	Ներկայացված և կարգավորված պահանջի մեծություն (հազար ՀՀ դրամ)	Ներկայացված և կարգավորված պահանջների քանակ
	1	2	3	4	5

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ՝ ____________________
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ՝ ____________________

Պատասխանատու ակտուար՝ ____________________

ԱՂՅՈՒՍԱԿ 4.1. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ, ՍԱԿԱՅՆ ԴԵՌԵՎՍ ՉՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ապահովագրության դաս		Պատահարի ամիս	Հատուցման հաշվեգրման ժամանակահատված (ամիս)	Հաշվեգրված ապահովագրական հատուցումների մեծություն (հազար ՀՀ դրամ)
	1	*2*	*3*	*4*

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ՝ ____________________
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ՝ ____________________

Պատասխանատու ակտուար՝ ____________________

»:

Հավելված 2
Հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 197-Ն որոշմամբ

ՀԱՎԵԼՎԱԾ 16
«Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04 հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ, ՍԱԿԱՅՆ ԴԵՌԵՎ ՉՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ԳՈՐԾԱԿՑԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՄԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(տարեկան)

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ, ՍԱԿԱՅՆ ԴԵՌԵՎ ՉՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ԳՈՐԾԱԿՑԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵՋ ՆԵՐԱՌՎՈՂ $բ_{տ-1}$, $բ_{տ-2}$, $բ_{տ-3}$ ՏԱՐՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ապահովագրական ընկերության անվանում _____

Ամսաթիվ _____

(հազար դրամ)

Ապահովագրության դաս		Հաշվեգրված ապահովագրական հատուցումներ			Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ		
1		*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
1	***Ոչ կյանքի ապահովագրություն, այդ թվում***						
1.1	Դժբախտ պատահարներից ապահովագրություն						
1.2	Առողջության ապահովագրություն						
1.3	Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն						
1.4	Երկաթուղային տրանսպորտի ապահովագրություն						
1.5	Օդանավերի ապահովագրություն						
1.6	Ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն						
1.7	Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն						
1.8	Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն						
1.9	Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն						
1.10	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն						
1.11	Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն						
1.12	Ջրային փոխադրամիջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն						
1.13	Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն						
1.14	Վարկի ապահովագրություն						
1.15	Երաշխիքի տրամադրում						
1.16	Ֆինանսական վնասների ապահովագրություն						
1.17	Դատական և արտադատական ծախսերի ապահովագրություն						
1.18	Աջակցության ապահովագրություն						

1.19	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն						
1.20	Ընդ որում՝ երկրաշարժի ռիսկի ապահովագրություն						
2	***Կյանքի ապահովագրություն, այդ թվում***						
2.1	Կյանքի ապահովագրություն						
2.2	Ամուսնության, ծնունդի ապահովագրություն						
2.3	Ներդրումային ակտիվներին կապվող ապահովագրություն						
2.4	Տոնտին ապահովագրություն						
2.5	Կապիտալի հատուցման ապահովագրություն						
2.6	Կուտակային կենսաթոշակային միջոցների կառավարում						
3	***ԸՆԴԱՄԵՆԸ***						

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ՝ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ՝ _____

Պատասխանատու ակտուար՝ _____

»:

*Հազար, երկու հազար և հինգ հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին**

Նպատակ ունենալով կազմակերպել Հայաստանի Հանրապետության դրամանիշերի շրջանառությունը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, 41-րդ և 42-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2018 թվականի դեկտեմբերի 25-ից շրջանառության մեջ դնել հազար, երկու հազար և հինգ հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները:

2. Սահմանել, որ հազար, երկու հազար և հինգ հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքով՝ փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց, առանց ժամկետային սահմանափակումների: Հազար դրամ անվանական արժեքով 1999, 2001, 2011 և 2015 թվականների թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության: Հինգ հազար դրամ անվանական արժեքով 1999, 2003, 2009, 2012 թվականների թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության:

3. Հաստատել հազար, երկու հազար և հինգ հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամների նմուշները՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

4. Հաստատել հազար, երկու հազար և հինգ հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամների նկարագրությունները՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
29 նոյեմբերի 2018 թ., N 198-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. նոյեմբերի 23-ին (ՀՀՊՏ N 31(634), 17.12. 2018):

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 198-Ն որոշմամբ

Հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նմուշը





Երկու հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նմուշը





Հինգ հազար դրամ անվանական արժեքով 2018 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նմուշը





Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 198-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Հազար դրամ անվանական արժեքով 2018 թ. թողարկման
Հայաստանի Հանրապետության թղթադրամի

1000 դրամ անվանական արժեքով 2018 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի չափերն են՝ 130 x 72 մմ: Թղթադրամը տպագրված է Hybrid™ բարձրորակ կոմպոզիտային հումքի վրա, որը երկու կողմերից պոլիէսթերի բարակ շերտով պատված բամբակե թուղթ է: Թղթադրամը պարունակում է Պարույր Սևակի դիմանկարը պատկերող բազմերանգ ջրանիշ, ինչպես նաև անվանական արժեքն արտահայտող երկերանգ ջրանիշ: Թղթադրամի հիմնական գույնն է՝ մանուշակագույնը:

Դիմերես

Թղթադրամի վերին մասում խորը տպագրության եղանակով տպագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 1000 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի ձախ հատվածում Պարույր Սևակի դիմանկարն է և «ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ» գրառումը: Դիմանկարից ձախ ուղղահայաց տպագրված են թղթադրամի անվանական արժեքը թվերով՝ «1000» և սև գույնով թղթադրամի համարանիշը՝ բաղկացած «ԱԱ» տառերից (թղթադրամի սերիան) և ութ թվերից (թղթադրամի համարը): Դրանց ներքևում առկա է օպտիկապես փոփոխական ներկով տպագրված պաշտպանական հատկանիշ, որն ունի շրջանակի տեսք և պարունակում է փետրագրչի պատկերն ու հորիզոնական «լողացող» 3D վառ էլեմենտ:

Պարույր Սևակի դիմանկարի ֆոնին՝ իր ձեռագրերից հատվածներ և զանգերի պատկերներ: Թղթադրամի անվանական արժեքը բառերով և թվերով՝ «ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 1000» տպագրված է ներքևի աջ մասում:

Թղթադրամի մեջտեղում առկա է պատուհանաձև պաշտպանական ներգիծ՝ կարմիրից կանաչի գունափոխման հատկանիշով. պարունակում է «լողացող» 3D վառ պատկերներ անկյունակների տեսքով, ՀՀ դրամի գրանշանի պատկերը, ինչպես նաև «1000» ապամետաղականացված գրառումը:

Թղթադրամի վերևի աջ հատվածում, սև գույնով, տպագրված է թղթադրամի համարանիշը, որից ներքև ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրություններն են: Դրանցից աջ գտնվում է թափանցիկ պատուհան՝ փետրագրչի հստակ պատկերով:

Թղթադրամի աջ եզրին հորիզոնական տպագրված է թողարկման տարեթիվը «2018», և ուղղահայաց՝ «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»:

Տկարատեսների համար թղթադրամի ձախ և աջ եզրերին առկա են շոշափելի ուղղահայաց գծեր:

Դարձերես

Թղթադրամի վերին մասում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումն է, իսկ դրանից ներքև՝ մանրատառաշարով կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 1000 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի վերևի ձախ անկյունում գտնվում է թափանցիկ պատուհան՝ փետրագրչի հստակ պատկերով:

Թղթադրամի մեջտեղի հատվածում՝ Պարույր Սևակի տունը իր ծննդավայր Ջանգակատուն գյուղի համապատկերին: Այս պատկերների մեջտեղում տպագրված է երկգույն մարգարտափայլ ժապավեն:

Թղթադրամի աջ մասում Պարույր Սևակի արձանի պատկերն է, որից աջ առկա են ուղղահայաց «1000» թիվը և «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը:

Թղթադրամի անվանական արժեքը թվերով և բառերով՝ «1000 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» տպագրված է ներքևի հատվածում:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Երկու հազար դրամ անվանական արժեքով 2018 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի

2000 դրամ անվանական արժեքով 2018 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի չափերն են՝ 135 x 72 մմ: Թղթադրամը տպագրված է Hybrid™ բարձրորակ կոմպոզիտային հումքի վրա, որը երկու կողմերից պոլիէսթերի բարակ շերտով պատված բամբակե թուղթ է: Թղթադրամը պարունակում է Տիգրան Պետրոսյանի դիմանկարը պատկերող բազմերանգ ջրանիշ, ինչպես նաև անվանական արժեքն արտահայտող երկերանգ ջրանիշ: Թղթադրամի հիմնական գույնն է՝ շագանակագույնը:

Դիմերես

Թղթադրամի վերին մասում խորը տպագրության եղանակով տպագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ«, իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 2000 ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի ձախ հատվածում Տիգրան Պետրոսյանի դիմանկարն է և «ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ» գրառումը: Դիմանկարից ձախ ուղղահայաց տպագրված են թղթադրամի անվանական արժեքը թվերով՝ «2000» և սև գույնով թղթադրամի համարանիշը՝ բաղկացած «ԲԱ» տառերից (թղթադրամի սերիան) և ութ թվերից (թղթադրամի համարը): Դրանց ներքևում առկա է օպտիկապես փոփոխական ներկով տպագրված պաշտպանական հատկանիշ, որն ունի շրջանակի տեսք և պարունակում է թագի պատկերն ու հորիզոնական «լողացող» 3D վառ էլեմենտ:

Տիգրան Պետրոսյանի դիմանկարի ֆոնին՝ հատվածներ իր հաղթական խաղերից և շախմատի արքայի թագադրման տեսարանը: Թղթադրամի անվանական արժեքը բառերով և թվերով՝ «ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 2000» տպագրված է ներքևի աջ մասում:

Թղթադրամի մեջտեղում առկա է պատուհանաձև պաշտպանական ներգիծ՝ ոսկեգույնից կանաչի գունափոխման հատկանիշով. պարունակում է «լողացող» 3D վառ պատկերներ անկյունակների տեսքով, ՀՀ դրամի գրանշանի պատկերը, ինչպես նաև «2000» ապամետաղականացված գրառումը:

Թղթադրամի վերևի աջ հատվածում, սև գույնով, տպագրված է թղթադրամի համարանիշը, որից ներքև ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրություններն են: Դրանցից աջ գտնվում է թափանցիկ պատուհան՝ թագի հստակ պատկերով:

Թղթադրամի աջ եզրին հորիզոնական տպագրված է թողարկման տարեթիվը «2018», և ուղղահայաց՝ «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»:

Տկարատեսների համար թղթադրամի ձախ և աջ եզրերին առկա են շոշափելի ուղղահայաց գծեր:

Դարձերես

Թղթադրամի վերին մասում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումն է, իսկ դրանից ներքև՝ մանրատառաշարով կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 2000 ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի վերևի ձախ անկյունում գտնվում է թափանցիկ պատուհան՝ թագի հստակ պատկերով:

Թղթադրամի մեջտեղի հատվածում՝ Շախմատի տունը՝ Երևան քաղաքի համապատկերին: Այս պատկերների մեջտեղում տպագրված է երկգույն մարգարտափայլ ժապավեն:

Թղթադրամի աջ մասում Տիգրան Պետրոսյանի արձանի պատկերն է, որից աջ առկա են ուղղահայաց «2000» թիվը և «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը:

Թղթադրամի անվանական արժեքը թվերով և բառերով՝ «2000 ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» տպագրված է ներքևի հատվածում:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Հինգ հազար դրամ անվանական արժեքով 2018 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի

5000 դրամ անվանական արժեքով 2018 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի չափերն են՝ 140 x 72 մմ: Թղթադրամը տպագրված է Hybrid™ բարձրորակ կոմպոզիտային հումքի վրա, որը երկու կողմերից պոլիէսթերի բարակ շերտով պատված բամբակե թուղթ է: Թղթադրամը պարունակում է Վիլյամ Սարոյանի դիմանկարը պատկերող բազմերանգ ջրանիշ, ինչպես նաև անվանական արժեքն արտահայտող երկերանգ ջրանիշ: Թղթադրամի հիմնական գույնն է՝ վարդագույնը:

Դիմերես

Թղթադրամի վերին մասում խորը տպագրության եղանակով տպագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 5000 ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի ձախ հատվածում Վիլյամ Սարոյանի դիմանկարն է և «ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ» գրառումը: Դիմանկարից ձախ ուղղահայաց տպագրված են թղթադրամի անվանական արժեքը թվերով՝ «5000» և սև գույնով թղթադրամի համարանիշը՝ բաղկացած «ԳԱ» տառերից (թղթադրամի սերիան) և ութ թվերից (թղթադրամի համարը): Դրանց ներքևում առկա է օպտիկապես փոփոխական ներկով տպագրված պաշտպանական հատկանիշ, որն ունի շրջանակի տեսք և պարունակում է նռան պատկերն ու հորիզոնական «լողացող» 3D վառ էլեմենտ:

Վիլյամ Սարոյանի դիմանկարի ֆոնին՝ հատվածներ իր «Նռենենիներ» պատմվածքից և գրքերի նկարազարդումներ: Թղթադրամի անվանական արժեքը բառերով և թվերով՝ «ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 5000» տպագրված է ներքևի աջ մասում:

Թղթադրամի մեջտեղում առկա է պատուհանաձև պաշտպանական ներգիծ՝ կանաչից կապույտի գունափոխման հատկանիշով. պարունակում է «լողացող» 3D վառ պատկերներ անկյունակների տեսքով, ՀՀ դրամի գրանշանի պատկերը, ինչպես նաև «5000» ապամետաղականացված գրառումը:

Թղթադրամի վերևի աջ հատվածում, սև գույնով, տպագրված է թղթադրամի համարանիշը, որից ներքև ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրություններն են: Դրանցից աջ գտնվում է թափանցիկ պատուհան՝ նռան հստակ պատկերով:

Թղթադրամի աջ եզրին հորիզոնական տպագրված է թողարկման տարեթիվը «2018», և ուղղահայաց՝ «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»:

Տկարատեսների համար թղթադրամի ձախ և աջ եզրերին առկա են շոշափելի ուղղահայաց գծեր:

Դարձերես

Թղթադրամի վերին մասում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումն է, իսկ դրանից ներքև՝ մանրատառաշարով կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 5000 ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի վերևի ձախ անկյունում գտնվում է թափանցիկ պատուհան՝ նռան հստակ պատկերով□

Թղթադրամի մեջտեղի հատվածում՝ Վիլյամ Սարոյանի նախնիների ծննդավայր Բաղեշի 20-րդ դարի սկզբի համապատկերը: Այս պատկերների մեջտեղում տպագրված է երկգույն մարգարտափայլ ժապավեն:

Թղթադրամի աջ մասում Վիլյամ Սարոյանի արձանի պատկերն է, որից աջ առկա են ուղղահայաց «5000» թիվը և «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը:

Թղթադրամի անվանական արժեքը թվերով և բառերով՝ «5000 ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» տպագրված է ներքևի հատվածում:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով կազմակերպել Հայաստանի Հանրապետության դրամանիշերի շրջանառությունը, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում կանխիկ դրամով իրականացվող գործառնությունները,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը հաստատելու մասին թիվ 40-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնակարգի Հավելված 1-ը, Հավելված 6-ը և Հավելված 10-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
29 նոյեմբերի 2018 թ., N 199-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. նոյեմբերի 23-ին (ՀՀՊՏ N31 (634), 17.12.2018):

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 199-Ն որոշմամբ

«Հավելված 1

«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի

Թղթադրամների վճարունակությունը որոշելու ցանցի տիպօրինակ

Թղթադրամի վճարունակությունը որոշող վանդակապատ ցանցը տպագրվում է թղթի կամ թափանցիկ ժապավենի վրա՝ տվյալ անվանական արժեքի, տվյալ տարեթվի նմուշի թղթադրամի չափերով: Այն բաղկացած է 200 հավասարաչափ վանդակներից: Վնասված դրամանիշը տեղադրվում է ցանցի վրա, և թղթի վրա տպագրված ցանցի դեպքում շուրջը գծվում է՝ կրկնելով թղթադրամի վնասված եզրագիծը, իսկ թափանցիկ ժապավենի վրա տպագրված ցանցի դեպքում ընդհանուր պատկերը լուսածորվում կամ լուսանկարվում է: Շրջագծի երկարությամբ դասավորված վանդակների թվի կեսին ավելացվում է այդ շրջագծի ներսում ընկած վանդակների ընդհանուր քանակը, որից հետո ստացված արդյունքից հանվում է տասնորդական մասը: Դրամանիշը պետք է վճարունակ համարել այն դեպքում, երբ ստացված արդյունքը հավասար կամ մեծ է 120-ից:

Թղթադրամների վճարունակությունը որոշող վանդակապատ ցանցերի չափերը

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ		Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներ	
Անվանական արժեքը	Չափերը (մմ)	Անվանական արժեքը	Չափերը (մմ)
500 դրամ (1999 թ.)	129 x 72	10 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (1999 թ.)	136 x 72	25 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2001 թ.)	136 x 72	50 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2011 թ.)	136 x 72	50 դրամ (1998 թ.)	122 x 65
1000 դրամ (2015 թ.)	136 x 72	100 դրամ (1993 թ.)	135 x 65
1000 դրամ (2018 թ.)	130 x 72	100 դրամ (1998 թ.)	122 x 65
2000 դրամ (2018 թ.)	135 x 72	200 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (1999 թ.)	143 x 72	500 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (2003 թ.)	143 x 72	1000 դրամ (1994 թ.)	145 x 68
5000 դրամ (2009 թ.)	143 x 72	5000 դրամ (1995 թ.)	145 x 71
5000 դրամ (2012 թ.)	143 x 72		
5000 դրամ (2018 թ.)	140 x 72		
10000 դրամ (2003 թ.)	150 x 72		
10000 դրամ (2006 թ.)	150 x 72		
10000 դրամ (2008 թ.)	150 x 72		
10000 դրամ (2012 թ.)	150 x 72		
10000 դրամ (2018 թ.)	145 x72		
20000 դրամ (1999 թ)	150 x 72		
20000 դրամ (2007 թ.)	155 x 72		
20000 դրամ (2009 թ.)	155 x 72		
20000 դրամ (2012 թ.)	155 x 72		
20000 դրամ (2018 թ.)	150 x 72		
50000 դրամ (2001 թ.)	160 x 79		
50000 դրամ (2018 թ.)	155 x 72		
100000 դրամ (2009 թ.)	160 x 72		

Հավելված 6
«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի

Թղթադրամների արմատների փաթեթաթղթերի, կապոցների վրադիրների գույները և արմատների փաթեթաթղթերի չափերը

Դրամանիշերը ըստ անվանական արժեքների	Վրադիրի և փաթեթաթղթի գույները	Լայնությունը (մմ)	Երկարությունը (մմ)	Մեկ գծի լայնությունը (մմ)	Գծերի քանակը (հատ)
10 դ	դարչնագույն	45	220	4	1
25 դ	կարմիր	45	220	4	1
50 դ	կապույտ	45	230	4	1
100 դ	դարչնագույն	45	230	4	2
200 դ	կարմիր	45	240	4	2
500 դ	կանաչ	45	240	4	2
1000 դ	դարչնագույն	50	260	4	3
2000 դ	դեղին	50	260	10	1
5000 դ	սև	50	260	4	1
10000 դ	կապույտ	57	290	10	2
20000 դ	նարնջագույն	55	260	10	1
50000 դ	մանուշակագույն	57	290	10	1
100000 դ	կանաչ	57	260	10	1

Թղթադրամների կապոցների վրադիրների չափերը

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ		Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներ	
Անվանական արժեքը	Չափերը (մմ)	Անվանական արժեքը	Չափերը (մմ)
500 դրամ (1999 թ.)	129 x 72	10 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (1999 թ.)	136 x 72	25 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2001 թ.)	136 x 72	50 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2011 թ.)	136 x 72	50 դրամ (1998 թ.)	122 x 65
1000 դրամ (2015 թ.)	136 x 72	100 դրամ (1993 թ.)	135 x 65
1000 դրամ (2018 թ.)	130 x 72	100 դրամ (1998 թ.)	122 x 65
2000 դրամ (2018 թ.)	135 x 72	200 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (1999 թ.)	143 x 72	500 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (2003 թ.)	143 x 72	1000 դրամ (1994 թ.)	145 x 68
5000 դրամ (2009 թ.)	143 x 72	5000 դրամ (1995 թ.)	145 x 71
5000 դրամ (2012 թ.)	143 x 72		
5000 դրամ (2018 թ.)	140 x 72		
10000 դրամ (2003 թ.)	150 x 72		
10000 դրամ (2006 թ.)	150 x 72		
10000 դրամ (2008 թ.)	150 x 72		
10000 դրամ (2012 թ.)	150 x 72		
10000 դրամ (2018 թ.)	145 x72		
20000 դրամ (1999 թ.)	150 x 72		
20000 դրամ (2007 թ.)	155 x 72		
20000 դրամ (2009 թ.)	155 x 72		
20000 դրամ (2012 թ.)	155 x 72		
20000 դրամ (2018 թ.)	150 x 72		
50000 դրամ (2001 թ.)	160 x 79		
50000 դրամ (2018 թ.)	155 x 72		
100000 դրամ (2009 թ.)	160 x 72		

Հավելված 10
«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության,
հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում
գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի

Բանկերից առաքվող արժեքների ցուցակ

______ _______________ *20 թ.*

Առաքող բանկը ____

Ստացող բանկը ____

Առաքում ենք թղթադրամների, մետաղադրամների կնքված պարկեր, կոնտեյներներ ավագ ինկասատոր _________________ *միջոցով:*

Դրամանիշեր	Գումարը (դրամ)
Թղթադրամներ	
10 դ.	
25 դ.	
50 դ.	
100 դ.	
200 դ.	
500 դ.	
1000 դ.	
2000 դ.	
5000 դ.	
10000 դ.	
20000 դ.	
50000 դ.	
100000 դ.	
Ընդամենը	
Մետաղադրամներ	
10 լ.	
20 լ.	
50 լ.	
1 դ.	
3 դ.	
5 դ.	
10 դ.	
20 դ.	
50 դ.	
100 դ.	
200 դ.	
500 դ.	
Ընդամենը	
Հանրագումարը	

Պարկերի, կոնտեյներների համարները	Կնիքների համարները
1	-
-	-
-	-
-	-
-	-
n	-
Ընդամենը պարկ և/ կամ կոնտեյներ	

Դրամարկղի պատասխանատու՝
աշխատակիցների ստորագրությունները

Ինկասատորներ՝

Դրոշմակնիքի տեղը՝

ՍՏԱՑԱԳԻՐ

_____ _____ 20 թ. ցուցակում նշված արժեքները, որոնք առաքվել են փակ պարկերով, կապոցներով, կոնտեյներներով՝ ավագ ինկասատոր _____
(ընդգծել)
_____ միջոցով՝ _____
(գումարը՝ թվերով և բառերով)
դրամ ընդհանուր գումարով ստացանք:

Արժեքների ընդունումը կատարվել է՝ ստուգելով _____
_____
_____

Արժեքներն ընդունեցին

Իրավասու անձ 1՝

Իրավասու անձ 2՝

Իրավասու անձ 3

Արժեքները հանձնեցին

Ինկասատորներ՝

»:

*«Ֆինանսական համակարգի մասնակիցներին ուղղված բողոքների հաշվառման, պահպանման և գրանցման ներքին գործընթացին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ» կանոնակարգ 8/07-ը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «իբ» կետը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդված 1.1-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9.1-րդ հոդվածը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասը, 81-րդ հոդվածի 3.1-րդ մասը, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով,

նպատակ ունենալով համակարգել և միասնականացնել ֆինանսական համակարգի մասնակիցների մոտ ֆինանսական համակարգի մասնակիցներին ուղղված սպառողների բողոքների մասին տեղեկատվության հավաքագրման և պահպանման ներքին ընթացակարգերը, բարձրացնել վերջիններիս, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ իրականացվող վերլուծությունների արդյունավետությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ֆինանսական համակարգի մասնակիցներին ուղղված բողոքների հաշվառման, պահպանման և գրանցման ներքին գործընթացին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ» կանոնակարգ 8/07-ը՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
29 նոյեմբերի 2018 թ., N 200-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. նոյեմբերի 23-ին (ՀՀՊՏ N31 (634), 17.12.2018):

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 200-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/07
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ֆինանսական համակարգի մասնակիցներին ուղղված բողոքների հաշվառման, պահպանման և տրամադրման ներքին գործընթացին ներկայացվող նվազագույն պայմաններն ու սկզբունքները:

2. Ֆինանսական համակարգի մասնակիցները պարտավոր են ունենալ բողոքների հաշվառման, պահպանման և տրամադրման գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտեր, որոնք առնվազն պետք է ներառեն բողոքների մասին տեղեկատվության հավաքագրման, էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանում գրանցման և հաշվառման, ինչպես նաև տեղեկատվության պահպանման գործընթացները:

3. Ֆինանսական համակարգի մասնակիցները պարտավոր են ապահովել, որ տեղեկատվական շտեմարանը համապատասխանի սույն կանոնակարգի Հավելվածով 1-ով սահմանված ձևաչափի տարրերին:

4. Ֆինանսական համակարգի մասնակիցները պարտավոր են ապահովել, որ տեղեկատվական շտեմարանում պահպանվեն առնվազն 3 տարի վաղեմություն ունեցող բողոքները, եթե ֆինանսական կազմակերպության ներքին իրավական ակտով այլ բան սահմանված չէ:

5. Կենտրոնական բանկի պահանջով և դրանում սահմանված ժամկետում ֆինանսական համակարգի մասնակիցները պարտավոր են Կենտրոնական բանկին էլեկտրոնային եղանակով տրամադրել իրենց ուղղված բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված ձևաչափով:

6. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված տեղեկատվությունը օգտագործում է ֆինանսական համակարգի մասնակիցների գործունեության ուսումնասիրություններ կատարելու նպատակով:

7. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***Ֆինանսական համակարգի մասնակից***՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկ և օտարերկրյա բանկի մասնաճյուղ (այսուհետ՝ բանկ), վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ (այսուհետ՝ ապահովագրական ընկերություն), դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպություն, ներդրումային ընկերություն և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ (այսուհետ՝ ներդրումային ընկերություն), ներդրումային (կենսաթոշակային) ֆոնդերի կառավարիչներ, Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրո:
2) ***Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրո*** (այսուհետ՝ Բյուրո)՝ ըստ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:
3) ***Ֆինանսական համակարգի հաշտարար*** (այսուհետ՝ Հաշտարար)՝ ըստ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:
4) ***Սպառող***՝ ֆիզիկական անձ, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, ով բողոք է ներկայացրել ֆինանսական համակարգի մասնակցին և (կամ) Հաշտարարին:
5) ***Բողոք***՝ սպառողի կողմից գրավոր (այդ թվում՝ էլեկտրոնային) ձևով ներկայացված գրություն, դիմում, բողոք-պահանջ, որը պարունակում է պահանջ, դժգոհություն և որն ուղղված է ֆինանսական համակարգի մասնակցին, վերաբերում է վերջինիս գործունեությանը և(կամ) նրանց կողմից մատուցվող ծառայություններին: Ըստ կազմակերպության տեսակի բողոքը կարող է պարունակել գույքային կամ ոչ գույքային պահանջ (առավել մանրամասն ներկայացվում է լրացման կանոններում):
6) ***Տեղեկատվական շտեմարան*** ֆինանսական համակարգի մասնակցի մոտ գտնվող էլեկտրոնային փաստաթուղթ, որտեղ արտացոլված է սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված տարրերի համապատասխան սպառողներից ստացված բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը:»:

ԳԼՈՒԽ 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԲԱՆԿԵՐ

8. Բանկերը բողոքների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանում բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը լրացնում են սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված Ձև 1-ին համապատասխան:

9. Բանկերը տեղեկատվական շտեմարանում լրացնում են գույքային և ոչ գույքային պահանջով բողոքները, որոնք վերաբերում են բանկի գործունեությանը, բանկի կողմից մատուցվող ծառայություններին:

10. ***«Ծառայություններ»*** սյունակում լրացվում է այն ֆինանսական ծառայության տեսակի անվանումը, որի գծով ստացվել են բողոքները: Նմանատիպ ծառայության տեսակները խմբավորվում են մեկում՝ համաձայն հետևյալ աղյուսակով ներկայացված օրինակի:

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ԼՐԱՑՎՈՒՄ Է
Ոսկյա իրերի գրավադրմամբ վարկեր	Սպառողական վարկ
Ավտովարկեր (այդ թվում լիզինգի միջոցով)	
Ապառիկ առևտրի վարկավորում (այդ թվում ֆակտորինգի միջոցով)	
Ուսանողական վարկեր	
Անշարժ/շարժական գույքի, դրամական միջոցների գրավադրմամբ վարկեր	
Երաշխավորությամբ վարկեր	
Առանց գրավի վարկեր	
Վարկային գիծ, օվերդրաֆտ	
Այլ սպառողական վարկեր	
Բնակարանի, անհատական բնակելի տան կամ նմանատիպ անշարժ գույքի ձեռքբերման կամ կառուցման վարկեր	Հիփոթեքային վարկեր
Բնակարանի, անհատական բնակելի տան կամ նմանատիպ անշարժ գույքի վերանորոգման վարկեր	
Այլ հիփոթեքային վարկեր	
Գյուղատնտեսական նպատակով տարածքների ձեռքբերում, հիմնում, զարգացում	Գյուղատնտեսական վարկեր
Գյուղատնտեսական մթերքի, կենդանիների ձեռքբերում, զարգացում	
Գյուղատնտեսական տեխնիկայի, սարքավորումների ձեռքբերում (այդ թվում լիզինգի միջոցով)	
Գյուղատնտեսական, արտադրական կարիքների ֆինանսավորում	
Ժամկետային ավանդներ	Ավանդներ
Ցպահանջ ավանդներ	
Ֆիզիկական անձ սպառողների համար ցանկացած տեսակի հաշիվների բացում և սպասարկում	Հաշիվներ
Ֆիզիկական անձ սպառողների համար ցանկացած տեսակի վճարային քարտերի տրամադրում և սպասարկում	Վճարային քարտեր
Ֆիզիկական անձ սպառողների համար ցանկացած տեսակի դրամական փոխանցումների իրականացում	Դրամական փոխանցումներ
Նշված ծառայությունների բնույթից տարբերվող ցանկացած այլ ծառայություն	Ծառայության հակիրճ անվանումը

11. ***«Թեմաներ»*** սյունակում լրացվում է տվյալ ծառայության վերաբերյալ այն թեման, որին վերաբերում է բողոքը: Եթե բողոքը կարելի է վերագրել մի քանի թեմաների, ապա ընտրվում է այն թեման, որին տվյալ բողոքի բովանդակությունը առավել շատ է համապատասխանում: (Օրինակ՝ եթե տվյալ բողոքը վերաբերում է վարկերի տրամադրման ընթացքում թերի տեղեկատվության բացահայտմանը, որը կարելի

է լրացնել մի քանի թեմաների ներքո, ապա, հաշվի առնելով, որ բողոքի առարկան տրամադրվող տեղեկատվությունն է, այն պետք է լրացվի «Հաղորդակցման և տրամադրվող տեղեկատվության թափանցիկության» թեմայի ներքո):

12. Թեմաները լրացվում են սույն կետով սահմանված Աղյուսակ 1-ում թվարկված տարբերակներով: Այն դեպքում, երբ նշված տարբերակները չեն համապատասխանում, համապատասխան վանդակում նշվում է բողոքի հակիրճ թեման: Ներդրումային ծառայություններին վերաբերող թեմաները լրացվում են ըստ Աղյուսակ 4-ի:

Աղյուսակ 1

Վարկերի տրամադրում
Վարկերի մարումներ
Վարկային պատմություն
Վարկերի տոկոսներ
Ավանդների տոկոսներ
Ավանդի ժամկետից շուտ հետ վերադարձում
Հաշվից կանխիկացում/կանխիկի մուտքագրում
Վճարման հանձնարարականների կատարում
ՊԻՆ կոդ
Տույժ ու տուգանքներ
Միջնորդավճարներ
Հաղորդակցում և տրամադրվող (հրապարակվող) տեղեկատվություն
Սխալ գումարների գանձում
Սպասարկման որակի այլ խնդիրներ
Սահմանված ժամկետների ուշացում
Անձնական տվյալների պաշտպանություն
Ձեղծարարություն, խաբեություն, խարդախություն
Միջոցների անհիրավասու օգտագործում

13. ***«Մարզեր, Երևան»*** սյունակում լրացվում է այն մարզը, որտեղ գտնվում է ֆինանսական համակարգի այն մասնակիցը կամ մասնակցի տարածքային ստորաբաժանումը, որին վերաբերել է բողոքը: Երևան քաղաքում գտնվող ֆինանսական համակարգի մասնակիցներին վերաբերող բողոքների համար նշվում է «Երևան»:

14. ***«Գույքային/ոչ գույքային»*** սյունակում լրացվում է բողոքները «գույքային» բնույթի են, թե՝ ոչ: Այն բողոքները, որոնք պարունակում են և՛ գույքային, և՛ ոչ գույքային պահանջներ, ապա նշվում են երկուսն էլ միաժամանակ: (Օրինակ՝ «գույքային, ոչ գույքային»):

15. ***«Ընդհանուր բողոքների քանակ»*** սյունակում լրացվում է ստացված ընդհանուր բողոքների քանակը:

16. ***«Բավարարված բողոքների քանակ», «Մասնակի բավարարված բողոքների քանակ», «Մերժված բողոքների քանակ», «Ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակ»*** սյունակներում համապատասխանաբար լրացվում է բավարարված, մասնակի բավարարված, մերժված և ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակը: Բավարարված են համարվում այն բողոքները, որոնք ամբողջությամբ բավարարվել են ֆինանսական համակարգի մասնակցի կողմից, մասնակի բավարարված են համարվում այն բողոքները, որում սպառողի կողմից ներկայացված պահանջ(ներ)ը մասնակի են բավարարվել, մերժված են համարվում այն բողոքները, որոնք չեն բավարարվել ֆինանսական համակարգի մասնակցի կողմից:

17. ***«Սպառողների վնասների վերականգման համար վճարված գումարներ»*** սյունակում լրացվում են բավարարված և մասնակի բավարարված բողոքների գծով սպառողներին վճարված և վճարման ենթակա (առկա է որոշում և գործարքը ընթացքի մեջ է) ընդհանուր գումարները՝ ՀՀ դրամով (օրինակ՝ վնասի փոխհատուցման համար վճարված գումարները, կիրառված զեղչերը և «դրամական» հատուցմամբ արտահայտված այլ զիջումները):

18. ***«Ֆինանսական համակարգի մասնակցի կողմից մերժված, սակայն Հաշտարարի, դատարանի կամ Արբիտրաժային տրիբունալի կողմից բավարարված բողոքների քանակ»*** սյունակում լրացվում են այն բողոքները, որոնք մերժվել են բանկի կողմից, սակայն բավարարվել են Հաշտարարի, արբիտրաժային տրիբունալի կամ դատարանի կողմից:

19. ***«Սպառողների իրավունքների խախտման համար վճարված 300.000-ական դրամների քանակը»*** սյունակում լրացվում է Հաշտարարի կամ դատարանի որոշմամբ ֆինանսական համակարգի մասնակցի կողմից սպառողների իրավունքների խախտման համար վճարված և վճարման ենթակա 300.000-ական դրամների քանակը:

20. ***«Հաշտարարի կողմից հաշտեցված դեպքերի համար վճարված պահանջների քանակ», «Հաշտարարի միջնորդությամբ հաշտեցված դեպքերի համար վճարված ընդհանուր գումարի չափ»*** սյունակներում լրացվում են համապատասխանաբար Հաշտարարի միջոցով հաշտեցված դեպքերի քանակը և հաշտեցման արդյունքում սպառողներին վճարված և վճարման ենթակա ընդհանուր գումարները:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21. Վարկային կազմակերպությունները և գրավատները (այսուհետ՝ վարկային կազմակերպություններ) բողոքների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանում բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը լրացնում են սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված Ձև 2-ին համապատասխան:

22. Վարկային կազմակերպությունները տեղեկատվական շտեմարանում լրացնում են գույքային և ոչ գույքային պահանջով բողոքները, որոնք վերաբերում են վարկային կազմակերպության գործունեությանը, վարկային կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններին:

23. ***«Ծառայություններ»*** սյունակում լրացվում է այն ֆինանսական ծառայության անվանումը, որի գծով ստացվել են բողոքները: Նմանատիպ ծառայության տեսակները խմբավորվում են մեկում՝ համաձայն հետևյալ աղյուսակով ներկայացված օրինակի:

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ԼՐԱՑՎՈՒՄ Է
Ոսկյա իրերի գրավադրմամբ վարկեր	Սպառողական վարկ
Ավտովարկեր (այդ թվում լիզինգի միջոցով)	
Ապառիկ առևտրի վարկավորում (այդ թվում ֆակտորինգի միջոցով)	
Ուսանողական վարկեր	
Անշարժ/շարժական գույքի, դրամական միջոցների գրավադրմամբ վարկեր	
Երաշխավորությամբ վարկեր	
Առանց գրավի վարկեր	
Վարկային գիծ, օվերդրաֆտ	
Այլ սպառողական վարկեր	
Բնակարանի, անհատական բնակելի տան կամ նմանատիպ անշարժ գույքի ձեռքբերման կամ կառուցման վարկեր	Հիփոթեքային վարկեր
Բնակարանի, անհատական բնակելի տան կամ նմանատիպ անշարժ գույքի վերանորոգման վարկեր	
Այլ հիփոթեքային վարկեր	
Գյուղատնտեսական նպատակով տարածքների ձեռքբերում, հիմնում, զարգացում	Գյուղատնտեսական վարկեր
Գյուղատնտեսական մթերքի, կենդանիների ձեռքբերում, զարգացում	
Գյուղատնտեսական տեխնիկայի, սարքավորումների ձեռքբերում (այդ թվում լիզինգի միջոցով)	
Գյուղատնտեսական, արտադրական կարիքների ֆինանսավորում	
Նշված ծառայությունների բնույթից տարբերվող ցանկացած այլ ծառայություն	Ծառայության հակիրճ անվանումը

24. ***«Թեմաներ»*** սյունակում լրացվում է տվյալ ծառայության վերաբերյալ այն թեման, որին վերաբերում է բողոքը: Եթե բողոքը կարելի է վերագրել մի քանի թեմաների, ապա ընտրվում է այն թեման, որին տվյալ բողոքի բովանդակությունը առավել շատ է համապատասխանում: (Օրինակ՝ եթե տվյալ բողոքը վերաբերում է վարկերի տրամադրման ընթացքում թերի տեղեկատվության բացահայտմանը, որը կարելի է լրացնել մի քանի թեմաների ներքո, ապա, հաշվի առնելով, որ բողոքի առարկան տրամադրվող տեղեկատվությունն է, այն պետք է լրացվի «Հաղորդակցման և տրամադրվող տեղեկատվության թափանցիկության» թեմայի ներքո):

25. Թեմաները լրացվում են սույն կետով սահմանված Աղյուսակ 2-ում թվարկված տարբերակներով: Այն դեպքում, երբ նշված տարբերակները չեն համապատասխանում, համապատասխան վանդակում նշվում է բողոքի հակիրճ թեման:

Աղյուսակ 2

Վարկերի տրամադրում
Վարկերի մարումներ
Վարկային պատմություն
Վարկերի տոկոսներ
Տույժ ու տուգանքներ
Միջնորդավճարներ/սակագներ
Հաղորդակցում և տրամադրվող (հրապարակվող) տեղեկատվություն
Սխալ գումարների գանձում
Սպասարկման որակ
Սահմանված ժամկետների ուշացում
Անձնական տվյալների պաշտպանություն
Ձեղծարարություն, խաբեություն, խարդախություն
Միջոցների անհիրավասու օգտագործում

26. ***«Մարզեր, Երևան»*** սյունակում լրացվում է այն մարզը, որտեղ գտնվում է ֆինանսական համակարգի այն մասնակիցը կամ մասնակցի տարածքային ստորաբաժանումը, որին վերաբերել է բողոքը: Երևան քաղաքում գտնվող ֆինանսական համակարգի մասնակիցներին վերաբերող բողոքների համար նշվում է «Երևան»:

27. ***«Գույքային/ոչ գույքային»*** սյունակում լրացվում է բողոքները «գույքային» բնույթի են, թե՝ ոչ: Այն բողոքները, որոնք պարունակում են և՛ գույքային, և՛ ոչ գույքային պահանջներ, նշվում են երկուսն էլ միաժամանակ. (Օրինակ՝ «գույքային, ոչ գույքային»):

28. ***«Ընդհանուր բողոքների քանակ»*** սյունակում լրացվում է ստացված ընդհանուր բողոքների քանակը:

29. ***«Բավարարված բողոքների քանակ», «Մասնակի բավարարված բողոքների քանակ», «Մերժված բողոքների քանակ», «Ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակ»*** սյունակներում համապատասխանաբար լրացվում են բավարարված, մասնակի բավարարված, մերժված և ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակը: Բավարարված են համարվում այն բողոքները, որոնք ամբողջությամբ բավարարվել են ֆինանսական համակարգի մասնակցի կողմից, մասնակի բավարարված են համարվում այն բողոքները, որում սպառողի կողմից ներկայացված պահանջ(ներ)ը մասնակի են բավարարվել, մերժված են համարվում այն բողոքները, որոնք չեն բավարարվել ֆինանսական համակարգի մասնակցի կողմից:

30. ***«Սպառողների վնասների վերականգման համար վճարված գումարներ»*** սյունակում լրացվում են բավարարված և մասնակի բավարարված բողոքների գծով սպառողներին վճարված և վճարման ենթակա ընդհանուր գումարները (օրինակ՝ վնասի փոխհատուցման համար վճարված գումարները, կիրառված զեղչերը և «դրամական» հատուցմամբ արտահայտված այլ զիջումները):

31. ***«Ֆինանսական համակարգի մասնակցի կողմից մերժված, սակայն ՖԾՀ, դատարանի կամ Արբիտրաժային տրիբունալի կողմից բավարարված բողոքների քանակ»*** սյունակում լրացվում են այն բողոքները, որոնք մերժվել են վարկային կազմակերպության կողմից, սակայն բավարարվել են Հաշտարարի, արբիտրաժային տրիբունալի կամ դատարանի կողմից:

32. ***«Սպառողների իրավունքների խախտման համար վճարված 300.000-ական դրամների քանակը»*** սյունակում լրացվում է Հաշտարարի կամ դատարանի որոշմամբ ֆինանսական համակարգի մասնակցի կողմից սպառողների իրավունքների խախտման համար վճարված և վճարման ենթակա 300.000-ական դրամների քանակը:

33. ***«Հաշտարարի կողմից հաշտեցված դեպքերի համար վճարված պահանջների քանակ», «Հաշտարարի միջնորդությամբ հաշտեցված դեպքերի համար վճարված ընդհանուր գումարի չափ»*** սյունակներում լրացվում են համապատասխանաբար Հաշտարարի միջոցով հաշտեցված դեպքերի քանակը և հաշտեցման արդյունքում սպառողներին վճարված և վճարման ենթակա ընդհանուր գումարները:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

34. Ապահովագրական ընկերությունները բողոքների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանում բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը լրացնում են սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված Ձև 3-ին համապատասխան:

35. Ապահովագրական ընկերությունները տեղեկատվական շտեմարանում լրացնում են գույքային և ոչ գույքային պահանջով բողոքները, որոնք վերաբերում են ապահովագրական ընկերության գործունեությանը, ապահովագրական ընկերության կողմից մատուցվող ծառայություններին:

36. ***«Ծառայություններ»*** սյունակում լրացվում է այն ապահովագրական ծառայության անվանումը, որի գծով ստացվել են բողոքներ: Օրինակ՝ աջակցության ապահովագրություն, բժշկական ապահովագրություն, ԱՊՊԱ, ավտոմեքենայի ԿԱՍԿՈ և այլն:

37. ***«Թեմաներ»*** սյունակում լրացվում է տվյալ ծառայության վերաբերյալ այն թեման, որին վերաբերում է բողոքը: Եթե տվյալ բողոքը կարելի է վերագրել մի քանի թեմաների, ապա ընտրվում է այն թեման, որին տվյալ բողոքի բովանդակությունը առավել շատ է համապատասխանում: (Օրինակ՝ եթե տվյալ բողոքը վերաբերում է ապահովագրական պայմանագրի կնքման ընթացքում թերի տեղեկատվության բացահայտմանը, որը կարելի է լրացնել մի քանի թեմաների ներքո, ապա, հաշվի առնելով, որ բողոքի առարկան տրամադրվող տեղեկատվությունն է, այն պետք է լրացվի «Հաղորդակցման և տրամադրվող տեղեկատվության թափանցիկության» թեմայի ներքո):

38. Թեմաները լրացվում են սույն կետով սահմանված Աղյուսակ 3-ում թվարկված տարբերակներով: Այն դեպքում, երբ նշված տարբերակները չեն համապատասխանում, համապատասխան վանդակում նշվում է բողոքի հակիրճ թեման:

Աղյուսակ 3

Ապահովագրական պայմանագրերի կնքում
Մեղավորության որոշման ընթացակարգեր
Վնասների գնահատում
Հետադարձ պահանջի իրավունք
Հատուցման մերժում
Տույժ ու տուգանքներ
Միջնորդավճարներ
Ապահովագրավճարներ/սակագներ
Հաղորդակցում և տրամադրվող (հրապարակվող) տեղեկատվություն
Սպասարկման որակ
Անձնական տվյալների պաշտպանություն
Ձեղծարարություն, խաբեություն, խարդախություն

39. ***«Մարզեր, Երևան»*** սյունակում լրացվում է այն մարզը, որտեղ գտնվում է ֆինանսական համակարգի այն մասնակիցը կամ մասնակցի տարածքային ստորաբաժանումը, որին վերաբերել է բողոքը: Երևան քաղաքում գտնվող ֆինանսական համակարգի մասնակիցներին վերաբերող բողոքների համար նշվում է «Երևան»:

40. ***«Գույքային/ոչ գույքային»*** սյունակում լրացվում է բողոքները «գույքային» բնույթի են, թե՝ ոչ: Այն բողոքները, որոնք պարունակում են և՛ գույքային, և՛ ոչ գույքային պահանջներ, նշվում են երկուսն էլ միաժամանակ: (Օրինակ՝ «գույքային, ոչ գույքային»):

41. ***«Ընդհանուր բողոքների քանակ»*** սյունակում լրացվում է ստացված ընդհանուր բողոքների քանակը:

42. ***«Բավարարված բողոքների քանակ», «Մասնակի բավարարված բողոքների քանակ», «Մերժված բողոքների քանակ», «Ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակ»*** սյունակներում համապատասխանաբար լրացվում է բավարարված, մասնակի բավարարված, մերժված և ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակը: Բավարարված են համարվում այն բողոքները, որոնք ամբողջությամբ բավարարվել են ֆինանսական համակարգի մասնակցի կողմից, մասնակի բավարարված են համարվում այն բողոքները, որում սպառողի կողմից ներկայացված պահանջ(ներ)ը մասնակի են բավարարվել, մերժված են համարվում այն բողոքները, որոնք չեն բավարարվել ֆինանսական համակարգի մասնակցի կողմից:

43. ***«Սպառողների վնասների վերականգնման համար վճարված գումարներ»*** սյունակում լրացվում են բավարարված և մասնակի բավարարված բողոքների գծով սպառողներին վճարված և վճարման ենթակա ընդհանուր գումարները (օրինակ՝ վնասի փոխհատուցման համար վճարված գումարները, կիրառված զեղչերը և «դրամական» հատուցմամբ արտահայտված այլ զիջումները):

44. ***«Ֆինանսական համակարգի մասնակցի կողմից մերժված, սակայն Հաշտարարի, դատարանի կամ Արբիտրաժային տրիբունալի կողմից բավարարված բողոքների քանակ»*** սյունակում լրացվում են այն բողոքները, որոնք մերժվել են ապահովագրական ընկերության կողմից, սակայն բավարարվել են Հաշտարարի, արբիտրաժային տրիբունալի կամ դատարանի կողմից:

45. ***«Սպառողների իրավունքների խախտման համար վճարված 300.000-ական դրամների քանակը»*** սյունակում լրացվում է Հաշտարարի կամ դատարանի որոշմամբ ֆինանսական համակարգի մասնակցի կողմից սպառողների իրավունքների խախտման համար վճարված և վճարման ենթակա 300.000-ական դրամների քանակը:

46. ***«Հաշտարարի կողմից հաշտեցված դեպքերի համար վճարված պահանջների քանակ», «Հաշտարարի միջնորդությամբ հաշտեցված դեպքերի համար վճարված ընդհանուր գումարի չափ»*** սյունակներում լրացվում են համապատասխանաբար Հաշտարարի միջոցով հաշտեցված դեպքերի քանակը և հաշտեցման արդյունքում սպառողներին վճարված և վճարման ենթակա ընդհանուր գումարները:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

47. Ներդրումային ընկերությունները բողոքների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանում բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը լրացնում են սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված Ձև 4-ին համապատասխան:

48. Ներդրումային ընկերությունները տեղեկատվական շտեմարանում լրացնում են գույքային և ոչ գույքային պահանջով բողոքները, որոնք վերաբերում են ներդրումային ընկերության գործունեությանը, ներդրումային ընկերության կողմից մատուցվող ծառայություններին:

49. ***«Ծառայություններ»*** սյունակում լրացվում է այն ծառայության անվանումը, որի գծով ստացվել են բողոքները: Օրինակ՝ արժեթղթերի փաթեթի կառավարում, արժեթղթերով գործարքների կատարում և այլն:

50. ***«Թեմաներ»*** սյունակում լրացվում է տվյալ ծառայության վերաբերյալ այն թեման, որին վերաբերում է բողոքը: Եթե տվյալ բողոքը կարելի է վերագրել մի քանի թեմաների, ապա ընտրվում է այն թեման, որին տվյալ բողոքի բովանդակությունը առավել շատ է համապատասխանում: (Օրինակ՝ եթե տվյալ բողոքը վերաբերում է ներդրումային պայմանագրի կնքման ընթացքում թերի տեղեկատվության բացահայտմանը, որը կարելի է լրացնել մի քանի թեմաների ներքո, ապա, հաշվի առնելով, որ բողոքի առարկան տրամադրվող տեղեկատվությունն է, այն պետք է լրացվի «Հաճախորդին տեղեկատվության (այդ թվում՝ հաշվետվությունների) տրամադրում» թեմայի ներքո):

51. Թեմաները լրացվում են սույն կետով սահմանված Աղյուսակ 4-ում թվարկված տարբերակներով: Այն դեպքում, երբ նշված տարբերակները չեն համապատասխանում, համապատասխան վանդակում նշվում է բողոքի հակիրճ թեման:

Ներդրումային ծառայություններին և ոչ հիմնական ծառայություններին վերաբերող թեմաներ
Ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում
Ֆիդուցիար պարտականություն և շահերի բախում
Հաճախորդին տեղեկատվության (այդ թվում՝ հաշվետվությունների) տրամադրում
Հաճախորդին դասակարգումը
Արժեթղթերով գործարքների կատարման կանոնները
Գրանցման (հաշվառման) կանոններ
Հաճախորդի միջոցների պաշտպանություն և վերադարձելիություն
Վերակազմակերպում և լուծարում
Ծառայողական տեղեկությունների պաշտպանություն
Ծառայությունների մատուցման պայմանագրերի դադարեցում
Արժեթղթերի պահառությանը վերաբերող թեմաներ
Ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում
Հանձնարարականների ներկայացում և կատարում
Ծառայության վճարներ (սակագներ)
Արժեթղթերի հաշվի տվյալների պաշտպանություն
Տեղեկատվության (քաղվածքների) տրամադրում
Թողարկողի կորպորատիվ գործողություններ
Տույժ/տուգանքների հաշվարկում
Ծառայությունների մատուցման պայմանագրերի դադարեցում

52. ***«Մարզեր, Երևան»*** սյունակում լրացվում է այն մարզը, որտեղ գտնվում է ֆինանսական համակարգի այն մասնակիցը կամ մասնակցի տարածքային ստորաբաժանումը, որին վերաբերել է բողոքը: Երևան քաղաքում գտնվող ֆինանսական համակարգի մասնակիցներին վերաբերող բողոքների համար նշվում է «Երևան»:

53. ***«Գույքային/ոչ գույքային»*** սյունակում լրացվում է բողոքները «գույքային» բնույթի են, թե՝ ոչ: Այն բողոքները, որոնք պարունակում են և՛ գույքային, և՛ ոչ գույքային պահանջներ, նշվում են երկուսն էլ միաժամանակ: (Օրինակ՝ «գույքային, ոչ գույքային»):

54. ***«Ընդհանուր բողոքների քանակ»*** սյունակում լրացվում է ընդհանուր բողոքների քանակը:

55. ***«Բավարարված բողոքների քանակ», «Մասնակի բավարարված բողոքների քանակ», «Մերժված բողոքների քանակ», «Ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակ»*** սյունակներում համապատասխանաբար լրացվում է բավարարված, մասնակի բավարարված, մերժված և ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակը: Բավարարված են համարվում այն բողոքները, որոնք ամբողջությամբ բավարարվել են ֆինանսական համակարգի մասնակցի կողմից, մասնակի բավարարված են համարվում այն բողոքները, որում սպառողի կողմից ներկայացված պահանջ(ներ)ը մասնակի են բավարարվել, մերժված են համարվում այն բողոքները, որոնք չեն բավարարվել ֆինանսական համակարգի մասնակցի կողմից:

56. ***«Սպառողների վնասների վերականգման համար վճարված գումարներ»*** սյունակում լրացվում են բավարարված և մասնակի բավարարված բողոքների գծով սպառողներին վճարված և վճարման ենթակա ընդհանուր գումարները (օրինակ՝ վնասի փոխհատուցման համար վճարված գումարները, կիրառված զեղչերը և «դրամական» հատուցմամբ արտահայտված այլ զիջումները):

57. ***«Ֆինանսական համակարգի մասնակցի կողմից մերժված, սակայն Հաշտարարի, դատարանի կամ Արբիտրաժային տրիբունալի կողմից բավարարված բողոքների քանակ»*** սյունակում լրացվում են այն բողոքները, որոնք մերժվել են ներդրումային ընկերության կողմից, սակայն բավարարվել են Հաշտարարի, արբիտրաժային տրիբունալի կամ դատարանի կողմից:

58. ***«Հաշտարարի կողմից հաշտեցված դեպքերի համար վճարված պահանջների քանակ», «Հաշտարարի միջնորդությամբ հաշտեցված դեպքերի համար վճարված ընդհանուր գումարի չափ»*** սյունակներում լրացվում են համապատասխանաբար Հաշտարարի միջոցով հաշտեցված դեպքերի քանակը և հաշտեցման արդյունքում սպառողներին վճարված և վճարման ենթակա ընդհանուր գումարները:

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

59. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները բողոքների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանում բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը լրացնում են սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված ՁԼ 5-ին համապատասխան:

60. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները տեղեկատվական շտեմարանում լրացնում են գույքային և ոչ գույքային պահանջով բողոքները, որոնք վերաբերում են վերջիններիս գործունեությանը և վերջիններիս կողմից մատուցվող ծառայություններին:

61. ***«Ծառայություններ»*** սյունակում լրացվում է այն ֆինանսական ծառայության տեսակի անվանումը, որի գծով ստացվել են բողոքները: Օրինակ՝ առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումների համակարգերի միջոցով իրականացվող փոխանցումներ, էլեկտրոնային փողի հաշվառման հաշիվներ, վճարային տերմինալներով կատարվող գործարքներ, այլ ծառայություններ:

62. ***«Թեմաներ»*** սյունակում լրացվում է տվյալ ծառայության վերաբերյալ այն թեման, որին վերաբերում է բողոքը: Եթե տվյալ բողոքը կարելի է վերագրել մի քանի թեմաների, ապա ընտրվում է այն թեման, որին տվյալ բողոքի բովանդակությունը առավել շատ է համապատասխանում:

63. Թեմաները լրացվում են սույն կետով սահմանված Աղյուսակ 5-ում թվարկված տարբերակներով: Այն դեպքում, երբ նշված տարբերակները չեն համապատասխանում, համապատասխան վանդակում նշվում է բողոքի հակիրճ թեման:

Աղյուսակ 5

Առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումների համակարգերով փոխանցումների իրականացման ընթացակարգ
էլեկտրոնային փողի հաշվառման հաշվի բացման/փակման ընթացակարգ
էլեկտրոնային փողերով գործառնությունների իրականացման ընթացակարգ
Կոմունալ վճարումների իրականացման ընթացակարգ
Կենսաթոշակների և սոցիալական նպաստների վճարման ընթացակարգ
Բյուջե ուղղված վճարումների իրականացման ընթացակարգ
Վարկերի մարմանն ուղղված վճարումների իրականացման ընթացակարգ
Միջնորդավճարներ/սակագներ
Հաղորդակցում և տրամադրվող (հրապարակվող) տեղեկատվություն
Սպասարկման որակի այլ խնդիրներ
Անձնական տվյալների պաշտպանություն
Խաբեություն, խարդախություն

64. ***«Մարզեր, Երևան»*** սյունակում լրացվում է այն մարզը, որտեղ գտնվում է ֆինանսական համակարգի այն մասնակիցը կամ մասնակցի տարածքային ստորաբաժանումը, որին վերաբերել է բողոքը: Երևան քաղաքում գտնվող ֆինանսական համակարգի մասնակիցներին վերաբերող բողոքների համար նշվում է «Երևան»**:**

65. ***«Գույքային/ոչ գույքային»*** սյունակում լրացվում է տվյալ բողոքները «գույքային» բնույթի են, թե՝ ոչ: Այն բողոքները, որոնք պարունակում են և՛ գույքային, և՛ ոչ գույքային պահանջներ, նշվում են երկուսն էլ միաժամանակ: (Օրինակ՝ «գույքային, ոչ գույքային»):

66. ***«Ընդհանուր բողոքների քանակ»*** սյունակում լրացվում է ստացված ընդհանուր բողոքները քանակը:

67. ***«Բավարարված բողոքների քանակ», «Մասնակի բավարարված բողոքների քանակ», «Մերժված բողոքների քանակ», «Ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակ»*** սյունակներում համապատասխանաբար լրացվում է բավարարված, մասնակի բավարարված, մերժված և ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակը: Բավարարված են համարվում այն բողոքները, որոնք ամբողջությամբ բավարարվել են ֆինանսական համակարգի մասնակցի կողմից, մասնակի բավարարված են համարվում այն բողոքները, որում սպառողի կողմից ներկայացված պահանջ(ներ)ը մասնակի են բավարարվել, մերժված են համարվում այն բողոքները, որոնք չեն բավարարվել ֆինանսական համակարգի մասնակցի կողմից:

68. ***«Սպառողների վնասների վերականգնման համար վճարված գումարներ»*** սյունակում լրացվում են բավարարված և մասնակի բավարարված բողոքների գծով սպառողներին վճարված և վճարման ենթակա ընդհանուր գումարները (օրինակ՝ վնասի փոխհատուցման համար վճարված գումարները, կիրառված զեղչերը և «դրամական» հատուցմամբ արտահայտված այլ զիջումները):

69. ***«Ֆինանսական համակարգի մասնակցի կողմից մերժված, սակայն Հաշտարարի, դատարանի կամ Արբիտրաժային տրիբունալի կողմից բավարարված բողոքների քանակ»*** սյունակում լրացվում են այն բողոքները, որոնք մերժվել են դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից, սակայն բավարարվել են Հաշտարարի, արբիտրաժային տրիբունալի կամ դատարանի կողմից:

70. ***«Հաշտարարի կողմից հաշտեցված դեպքերի համար վճարված պահանջների քանակ», «Հաշտարարի միջնորդությամբ հաշտեցված դեպքերի համար վճարված ընդհանուր գումարի չափ»*** սյունակներում լրացվում են համապատասխանաբար Հաշտարարի միջոցով հաշտեցված դեպքերի քանակը և հաշտեցման արդյունքում սպառողներին վճարված և վճարման ենթակա ընդհանուր գումարները:

ԲՅՈՒՐՈ

71. Բյուրոն տեղեկատվական շտեմարանում բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը լրացնում է սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված Ձև 6-ին համապատասխան:

72. Բյուրոն տեղեկատվական շտեմարանում լրացնում է գույքային և ոչ գույքային պահանջով գրավոր բողոքները, որոնք վերաբերում են Բյուրոյի և(կամ) ապահովագրական ընկերությունների գործունեությանը, Բյուրոյի և(կամ) ապահովագրական ընկերությունների կողմից մատուցվող ծառայություններին:

73. ***«Ծառայություններ»*** սյունակում լրացվում է այն ծառայության անվանումը, որի գծով ստացվել է բողոքը:

74. ***«Թեմաներ»*** սյունակում լրացվում է այն թեման, որին վերաբերում է բողոքը: Եթե տվյալ բողոքը կարելի է վերագրել մի քանի թեմաների, ապա ընտրվում է այն թեման, որին տվյալ բողոքի բովանդակությունը առավել շատ է համապատասխանում:

75. Թեմաները լրացվում են սույն կետով սահմանված Աղյուսակ 6-ում թվարկված տարբերակներով: Այն դեպքում, երբ նշված տարբերակները չեն համապատասխանում, համապատասխան վանդակում նշվում է բողոքի հակիրճ թեման:

Աղյուսակ 6[**]

Ապահովագրական պայմանագրերի կնքման ընթացակարգեր
Մեղավորության որոշման ընթացակարգեր
Վնասների գնահատում
Հետադարձ պահանջի իրավունք
Հատուցման մերժում
Տույժ ու տուգանքներ
Միջնորդավճարներ
Ապահովագրավճար/սակագին
Հաղորդակցման և տրամադրվող տեղեկատվության թափանցիկություն
Սպասարկման որակի այլ խնդիրների
Անձնական տվյալների պաշտպանություն
Խաբեություն, խարդախություն

76. ***«Գույքային/ոչ գույքային»*** սյունակում լրացվում է տվյալ բողոքը «գույքային» բնույթի են, թե՝ ոչ: Այն բողոքները, որոնք պարունակում են և՛ գույքային, և՛ ոչ գույքային պահանջներ, նշվում են երկուսն էլ միաժամանակ: (Օրինակ՝ «գույքային, ոչ գույքային»):

77. ***«Ընդհանուր բողոքների քանակ»*** սյունակում լրացվում է ստացված ընդհանուր բողոքների քանակը:

[**] *Ստորև ներկայացված աղյուսակների համարակալումը պաշտոնական հրապարակման մեջ խախտվել էր տեխնիկական պատճառներով:*

78. ***«Բավարարված բողոքների քանակ», «Մասնակի բավարարված բողոքների քանակ», «Մերժված բողոքների քանակ», «Ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակ»*** սյունակներում համապատասխանաբար լրացվում է բավարարված, մասնակի բավարարված, մերժված և ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակը: Բավարարված են համարվում այն բողոքները, որոնք ամբողջությամբ բավարարվել են ֆինանսական համակարգի մասնակցի կողմից, մասնակի բավարարված են համարվում այն բողոքները, որում սպառողի կողմից ներկայացված պահանջ(ներ)ը մասնակի են բավարարվել, մերժված են համարվում այն բողոքները, որոնք չեն բավարարվել Բյուրոյի կողմից:

79. ***«Ստացված բողոքների գծով իրականացված կրկնակի փորձաքննությունների քանակ»*** սյունակում լրացվում է ստացված բողոքների գծով իրականացված կրկնակի փորձաքննությունների քանակը:

80. ***«Սպառողների վնասների վերականգման համար վճարված գումարներ»*** սյունակում լրացվում են բավարարված և մասնակի բավարարված բողոքների գծով սպառողներին վճարված և վճարման ենթակա ընդհանուր գումարները (օրինակ՝ վնասի փոխհատուցման համար վճարված գումարները, կիրառված զեղչերը և «դրամական» հատուցմամբ արտահայտված այլ զիջումները):

81. ***«Բյուրոյի կողմից մերժված, սակայն Հաշտարարի, դատարանի կամ Արբիտրաժային տրիբունալի կողմից բավարարված բողոքների քանակ»*** սյունակում լրացվում են այն բողոքները, որոնք մերժվել են Բյուրոյի կողմից, սակայն բավարարվել են Հաշտարարի, արբիտրաժային տրիբունալի կամ դատարանի կողմից:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ (ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ) ՖՈՆԴԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐ

82. Ներդրումային (կենսաթոշակային) ֆոնդերի կառավարիչները բողոքների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանում բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը լրացնում են սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված Չև 7-ին համապատասխան:

83. Ներդրումային (կենսաթոշակային) ֆոնդերի կառավարիչները տեղեկատվական շտեմարանում լրացնում են գույքային և ոչ գույքային պահանջով գրավոր բողոքները, որոնք վերաբերում են ներդրումային (կենսաթոշակային) ֆոնդերի կառավարիչների գործունեությանը և ներդրումային (կենսաթոշակային) ֆոնդերի կառավարիչների կողմից մատուցվող ծառայություններին:

84. ***«Ծառայություններ»*** սյունակում լրացվում է այն ծառայության անվանումը, որի գծով ստացվել է բողոքը:

85. ***«Թեմաներ»*** սյունակում լրացվում է այն թեման, որին վերաբերում է բողոքը: Եթե տվյալ բողոքը կարելի է վերագրել մի քանի թեմաների, ապա ընտրվում է այն թեման, որին տվյալ բողոքի բովանդակությունը առավել շատ է համապատասխանում:

86. Թեմաները լրացվում են սույն կետով սահմանված Աղյուսակ 7-ում թվարկված տարբերակներով: Այն դեպքում, երբ նշված տարբերակները չեն համապատասխանում, համապատասխան վանդակում նշվում է բողոքի հակիրճ թեման:

Աղյուսակ 7

Ներդրումային ֆոնդի կառավարման ծառայությանը վերաբերող թեմաներ
Ֆոնդի արժեթղթերի թողարկում, տեղաբաշխում, փոխանակում և հետգնում (մարում)
Ֆոնդի ներդրումային քաղաքականություն
Ֆիդուցիար պարտականություն և շահերի բախում
Գրանցման (հաշվառման) կանոններ
Ֆոնդից գանձվող վճարներ և կատարված ծախսեր
Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկ
Տեղեկատվության (այդ թվում՝ հաշվետվությունների) բացահայտում (տրամադրում)
Ֆոնդի կորպորատիվ կառավարում
Ծառայողական տեղեկությունների պաշտպանություն
Ֆոնդի վերակազմակերպում և դադարում (լուծարում)
Արժեթղթերի փաթեթի կառավարմանը և ներդրումային խորհրդատվությանը վերաբերող թեմաներ
Ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում

Ֆիդուցիար պարտականություն և շահերի բախում
Հաճախորդին տեղեկատվության (այդ թվում՝ հաշվետվությունների) տրամադրում
Հաճախորդին դասակարգում
Արժեթղթերով գործարքների կատարման կանոններ
Գրանցման (հաշվառման) կանոններ
Հաճախորդի միջոցների պաշտպանություն և վերադարձելիություն
Վերակազմակերպում և լուծարում
Ծառայողական տեղեկությունների պաշտպանություն
Ծառայությունների մատուցման պայմանագրերի դադարեցում
Արժեթղթերի պահառությանը վերաբերող թեմաներ
Ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում
Հանձնարարականների ներկայացում և կատարում
Ծառայության վճարներ (սակագներ)
Արժեթղթերի հաշվի տվյալների պաշտպանություն
Տեղեկատվության (քաղվածքների) տրամադրում
Թողարկողի կորպորատիվ գործողություններ
Տույժ/տուգանքների հաշվարկում
Ծառայությունների մատուցման պայմանագրերի դադարեցում

87. ***«Գույքային/ոչ գույքային»*** սյունակում լրացվում է բողոքները «գույքային» բնույթի են, թե՝ ոչ: Այն բողոքները, որոնք պարունակում են և՛ գույքային, և՛ ոչ գույքային պահանջներ, նշվում են երկուսն էլ միաժամանակ: (Օրինակ՝ «գույքային, ոչ գույքային»):

88. ***«Ստացված ընդհանուր բողոքների քանակ»*** սյունակում լրացվում է ստացված ընդհանուր բողոքների քանակը:

89. ***«Բավարարված բողոքների քանակ», «Մասնակի բավարարված բողոքների քանակ», «Մերժված բողոքների քանակ», «Ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակ»*** սյունակներում համապատասխանաբար լրացվում է բավարարված, մասնակի բավարարված, մերժված և ընթացքի մեջ գտնվող բողոքների քանակը: Բավարարված են համարվում այն բողոքները, որոնք ամբողջությամբ բավարարվել են ֆինանսական համակարգի մասնակցի կողմից, մասնակի բավարարված են համարվում այն բողոքները, որում սպառողի կողմից ներկայացված պահանջ(ներ)ը մասնակի են բավարարվել, մերժված են համարվում այն բողոքները, որոնք չեն բավարարվել ֆինանսական համակարգի մասնակցի կողմից:

90. ***«Սպառողների վնասների վերականգնման համար վճարված գումարներ»*** սյունակում լրացվում են բավարարված և մասնակի բավարարված բողոքների գծով սպառողներին վճարված և վճարման ենթակա ընդհանուր գումարները (օրինակ՝ վնասի փոխհատուցման համար վճարված գումարները, կիրառված զեղչերը և «դրամական» հատուցմամբ արտահայտված այլ զիջումները):

91. ***«Ֆինանսական համակարգի մասնակցի կողմից մերժված, սակայն Հաշտարարի, դատարանի կամ Արբիտրաժային տրիբունալի կողմից բավարարված բողոքների քանակ»*** սյունակում լրացվում են այն բողոքները, որոնք մերժվել են ներդրումային (կենսաթոշակային) ֆոնդերի կառավարիչների կողմից, սակայն բավարարվել են Հաշտարարի, արբիտրաժային տրիբունալի կամ դատարանի կողմից:

